


ԱՆՆԱ ԱՐԵՎԵՏԱՏՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՍՈՒՊՈԼՍԻ

ՀԱՅ ԵՐԱԾԻՒՑ-ՏԵՍԱԲԱՆԵՐԸ

XVIII-XIX ԴԱՐԵՐ



**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍԻՏՈՒՏ**

ԱՆԱ ԱՐԵՎՃԱՅԱՆ

**ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ
ՀԱՅ ԵՐԱԺԻՇՏ-ՏԵՍԱԲԱՆՆԵՐԸ
XVIII-XIX ԴԱՐԵՐ**

**ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021**

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ИСКУССТВ

АННА АРЕВШАТЯН

МУЗЫКАНТЫ-ТЕОРЕТИКИ
КОНСТАНТИНОПОЛЯ
XVIII-XIX вв.

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
2021

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA
INSTITUTE OF ARTS

ANNA AREVSHATYAN

**THE THEORIST MUSICIANS OF
CONSTANTINOPL
XVIII-XIX cc.**

YEREVAN
“GITUTYUN” PUBLISHING HOUSE OF THE NAS RA
2021

Հրատարակում է ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գիտական խմբագիր՝
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
Լիլիթ Երնջակյան

Ա. 865 Արևածագը Ա. Կոստանդնուպոլսի հայ երաժիշտ-տեսաբանները. XVIII-XIX դարեր- Եր., «Գիտություն», 2021, 126 էջ:

Գիրքը նվիրված է XVIII-XIX դարերում Կոստանդնուպոլսում ստեղծագործած հայ երաժիշտ-տեսաբաններին, ովքեր կարևոր դերակատարում են ունեցել հայ ազգային մասնագիտացված երաժշտական արվեստի զարգացման գործում: Հատկապես նշանակալի է նրանց ներդրումը Նոր Ժամանակի հայ ազգային երաժշտատեսական մտքի ձևավորման մեջ: Գր. Գաղափարայանի, Հ. Լիմոնջանի, Ն. Թաշճյանի, Ե. Տևոտյանի, Ա. Հիսարյանի աշխատություններում արծարծվել են հայ ավանդական երաժշտության բազմաթիվ խնդիրներ՝ ներառելով ինչպես եկեղեցական հոգեւոր երգարվեստի տեսության, մասնավորապես խազագիտության հարցերը, այնպես էլ ավելի կատարյալ և նոր ժամանակների պահանջներին համապատասխանող նոտագրության ստեղծումը:

Մենագրությունը հասցեագրված է ինչպես մասնագետ-երաժշտագետներին, այնպես էլ հայ երաժշտության պատմությամբ հետաքրքրվող ընթերցողներին:

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ մասնագիտացված երաժշտական մշակույթի պատմության մեջ Նորոգության շրջանը (XVII-XVIII դդ.), հիքավի, բախտորոշ մի ժամանակահատված է: Ազգային ինքնագիտակցության զարթոնքը հայկական գաղթօջախների զարգացման պայմաններում դրսևորվել է Մերձավոր Արևելքի, Արևմտյան և Արևելյան Եվրոպայի երկրներում, անգամ հեռավոր Հնդկաստանում իրականացված ազգանվեր մտավոր բազմակողմանի գործունեության մեջ: Հայտնի է, որ հենց այդ ժամանակաշրջանում իրմնվում են բազմաթիվ ազգային դպրոցներ, եկեղեցիներ, տարբեր մշակութային միություններ, սկզբնավորվում է ազգային պարբերական մամուլ, իսկ միսիթարյան միաբանների ջանքերով սկսում են զարգանալ գիտության հատկապես հումանիտար ճյուղերը՝ պատմագիտությունը, աղբյուրագիտությունը, ազգագրությունը, բառարանագիտությունը, ձեռագրագիտությունը, գրականագիտությունը, լեզվաբանությունը, արվեստաբանությունը և այլն:

Այդ շրջանում է սկզբնավորվում նաև հայ երաժշտապատմական և երաժշտատեսական միտքը, մի փաստ, որը մինչև վերջ չի գիտակցվել և ըստ արժանվույն չի գնահատվել մեր երաժշտագիտության մեջ: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ եթե հայ երաժշտապատմական միտքը կազմավորվել և զարգացել է Վենետիկում և Ս.Ղազար կղզում նախնառաջ արքահայր Միսիթար Սեբաստացու ջանքերով, որը, ինչպես հայտնի է, նաև շարականներ է գրել, այնուհետև Ղևոնդ Ալիշանի¹, Գաբրիել Ավետիքյանի²,

¹ Տե՛ս, օրինակ, Ալիշան Դ. Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873:

Մինաս Բժշկյանի և այլոց շնորհիվ, ապա երաժշտատեսական միտքը, անկասկած, սկզբնավորվել է Կոստանդնուպոլսում՝ ձևավորվելով նախնառաջ Գրիգոր Գաղասաքայյանի նպատակառուղղված գիտական գործունեության մեջ, ինչն արտացոլվել է նրա աշխատություններում²: Այդ գերակայությունը, որը Պոլսի հայ երաժիշտների նշանակալի մասնակցության միանշանակ հետևանք էր ոչ միայն ազգային, այլ նաև առհասարակ մերձավորարևելյան երաժշտական մշակույթի և կատարողական արվեստի ասպարեզներում, պահպանվել է շուրջ մեկ հարյուրամյակի՝ XVIII դարի երկրորդ կեսի - XIX դարի առաջին կեսի ընթացքում, ընդեռուպ մինչև ազգային կոմպոզիտորական դպրոցի ձևավորման սկիզբը, երբ, ի դեմս Գարրիել Երանյանի և Տիգրան Չուխաչյանի՝ Պոլսում, և Քրիստափոր Կարա-Սուրզայի, Մակար Եկմալյանի, Կոմիտաս Վարդապետի, Նիկողայոս և Արմեն Տիգրանյանների և Ալեքսանդր Սպենդիարյանի՝ Կովկասում և Ռուսաստանում, աստիճանաբար թափ է առնում հայ մասնագիտացված երաժշտական մշակույթի տարբեր բնագավառների զարգացումը: Հայ կոմպոզիտորները, հասնելով նշանակալի ստեղծագործական արդյունքների օպերային, խմբերգային, կանոնադասային-օրատորիալ, կամերային վոկալ-գործիքային ժանրերում ստեղծված երկերում, Եվրոպայի մասնագիտական երաժշտական շրջանակներին ներկայացրին հայ ազգային երա-

²Տե՛ս Աւետիքեան Գ. Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1814:

³Տե՛ս, օրինակ, Գաղասաքայյան Գր. Գրքոյլ որ կոչի Նուազարան, Պոլս, 1794: Նույնի Գիրք երաժշտական յորում պարունակին Հարցմունք եւ Պատասխանատութիւններ Հայերէն, Յունարէն եւ Պարսկարէն համառուաբար, Պոլս, 1803:

Ժշտական մշակույթի բազմադարյան բազմաճյուղ ավանդույթները և հեռանկարային ներուժը:

Կոստանդնուպոլիսը իբրև չորս կայսրությունների պատմական մայրաքաղաք և տարբեր մշակույթների խառնարան, մշտական շփումների հնարավորություն եր ընձեռում տարբեր ազգերի երաժիշտների միջև: Հիշենք, թե որքան հայ երաժիշտներ է տվել Պոլիսը⁴: Նրանց թվում՝ Գրիգոր Գապասաքայյան, Զեննէ Պողոս, Մինաս Բժշկյան, Համբարձում Լիմոնջյան, Արիստակես Հովհաննիսյան, Եղիա Տնտեսյան, Լեոն Չիլինկիրյան, Հակոբոս Այվազյան, Համբարձում Շերյան, Նիկողայոս Թաշճյան, Արիստակես Հիսարյան և ուրիշներ: Հիշատակելի է հանենդեների⁵ և սագենդեների⁶ մի ամբողջ շարք, որոնցից առավել հայտնի են հանենդե Աստիկը, սագենդե Արշակը, Թամբուրի Ալիքսանը և շատ ու շատ ուրիշներ⁷:

Պոլսի մտավորական և գեղարվեստական շրջանակների հետ սերտորեն կապված է եղել Կոմիտաս վարդապետը, որն իր կյանքի մի մասը, հատկապես 1908-1916 թվականները, անց է կացրել Պոլսում: Այդ ավանդույթը չի ընդ-

⁴ Պոլսում գործած հայտնի հայ երաժիշտների հնարավորինս լրիվ ցանկը տես՝ «Փիթեցյան Գր. Քրիստաֆոր Կարա-Մուրզա, Երևան, 2013, էջ 33—36:

⁵ Հանենդե – երգիչ կատարողներ:

⁶ Սագենդե – նվագածու երաժիշտներ:

⁷ Այդ առումով ուշագրավ է Ստամբուլում թողարկած լազերային երկու խոսասահիկներից բաղկացած ալբոմը, որը վերնագրված է «Ermeni bestekarlar» - “Armenian Composers”, 2001 Sony (Turkiye Müzik ve Sanat). Ալբոմը օժտված է “Three aspects of the Ottoman Music: The Sultan, Women and Non-Muslim Musicians” վերտառությամբ անգերեն և թուրքերեն առաջարանով, որի հեղինակն է հայտնի երաժշտագետ Բյուլենտ Ակսոյը: Խոսասահիկների շապիկները ձևավորված են Հ. Լիմոնջյանի և պոլսահայ մյուս երաժիշտների լուսանկարներով:

հատվել անգամ Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանությունից հետո՝ հարատևելով մինչև այսօր: Դրա վառ ապացույցն է, օրինակ, այնպիսի երաժիշտների բեղուն ստեղծագործական գործունեությունը, ինչպիսիք են կոմպոզիտորներ Էդգար Մանսար, Սիրվարդ Կարա-Մանուկը, դաշնակահար Շահան Արծրունին, դիրիժոր Նվարդ Անդրեասյանը և այլք:

Հայ երաժշտագետները, բնականաբար, տարբեր տարիներին և տարբեր ձևաչափերով անդրադարձել են Պոլսում ստեղծագործած հայ երաժիշտների վաստակին և ներդրմանը ոչ միայն ազգային՝ այլ նաև Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության երաժշտական մշակույթների տարբեր բնագավառներում, սակայն առ այսօր չի ստեղծվել առանձին ընդհանուր առողջություն մի ուսումնասիրություն, որը, սահմանագատելով պատմական մի ժամանակահատված, լուսաբաներ Պոլսի հայ երաժիշտ-տեսաբանների գործունեությունը մեկտեղված՝ ելնելով արդի երաժշտագիտության չափանիշներից և պահանջներից:

Սույն ուսումնասիրությունը նվիրված է հատկապես XVIII դարի երկրորդ կեսի - XIX դարի առաջին կեսի, այսինքն՝ մինչև ազգային կոմպոզիտորական դպրոցի ձևավորման շրջանի՝ Պոլսի հայ եկեղեցական երաժիշտ-տեսաբանների ավանդին: Երաժիշտներ, որոնք կարևոր դերակատարում են ունեցել՝ կապող օղակ հանդիսանալով ուշմիջնադարյան ավանդույթի և Նոր ժամանակի երաժշտական մշակույթի մարտահրավերների միջև: Երաժիշտներ, ովքեր մեծապես նպաստել են հայ ազգային երաժշտատեսական մտքի ձևավորմանը և նոր հայկական ձայնագիտության և նոտագրության ստեղծմանը: Նկատի ունենք դարձյալ Գրիգոր Գապասաբայյանի, Համբարձում Լիմոնջյանի և

իր աշակերտների, Եղիա Տնտեսյանի, Նիկողայոս Թաշճյանի, Լևոն Չիլինկիրյանի և այլոց բեղմնավոր և ազգանվեր գործունեությունը։ Ուստի՝ այդ երաժիշտ-ձայնագետների կամ ժամանակակից լեզվով ասած՝ երաժիշտ-տեսաբանների ժառանգության համակողմանի ուսումնասիրությունը կարող է լիարժեք պատկերացում տալ Դոլսի հայ երաժիշտների գիտական-ստեղծագործական ներդրման մասին՝ հստակեցնելով նրանց տեղն ու դերը ազգային երաժշտական մշակույթի անդաստանում։

Նոր ժամանակի ազգային երաժշտական գիտական մտքի ակունքներում կանգնած Գրիգոր Գապասաքայյանի, հայկական նոր նոտագրության հեղինակ Համբարձում Լիմոնջյանի, Հայ առաքելական եկեղեցու երաժշտածիսական մատյանների երգասացությունների ձայնագրությունն իրականացնող Նիկողայոս Թաշճյանի և ազգային երաժիշտների կենսագրություններն ի մի բերած Արխատակես քահանա Հիսարյանի ստեղծագործական գործունեությունն այսօր էլ կարիք ունի ուսումնասիրության և գնահատման։ Այդ առումով կարևոր է XIX դարի պոլսահայ երաժշտական կյանքի՝ Կոմիտաս վարդապետի գնահատականը, որն արտացոլված է նրա «Հայ եկեղեցական երաժշտությունը Ժթդարում» հայտնի հոդվածում, ինչպես նաև խորհրդահայ մի շարք երաժշտագետների աշխատություններում, որոնցում քննվել են պոլսահայ երաժիշտների գործունեությունն ու ստեղծագործական ժառանգությունը⁸։

⁸Տե՛ս, օրինակ, Աթայան Ռ. Գրիգոր Գապասաքայյանը և խազագիտությունը, ԲՈՒ, հ. 5, Ե., 1960, էջ 165—175; *Тамбурсист Арутин*. Руководство по восточной музыке. Перевод с турецкого, предисловие и примечания Н.К. Тагмизяна. Е.: изд-во АН Арм.ССР, 1968; *Սուրայան Մ. Պատմական ակնարկ* 19-րդ դարի հայ երաժշտության, Եր., ՀՍՍՀ Պ. Պատմական ակնարկ 19-րդ դարի հայ երաժշտության, Եր., ՀՍՍՀ

Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում գրքի գիտական խմբագիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիլիթ Երնջակյանին արժեքավոր խորհուրդների և ճշումների համար:

ԳԱ իրատ., 1971; *Թահմիզյան Ն.* Գրիգոր Գապասարայյանի «Համառությունն երաժշտականի գիտութեան», «Բանբեր Սատենադարանի», հ. 11, Եր., 1973, էջ 291—334; *Սուրայյան Մ.* Ուրվագիծ արևմտահայ երաժշտության պատմության (XIX դ. և XX դարակիզբ), Ե., ՀՍՍՀ ԳԱ իրատ., 1989; *Այվազյան Ա.* Руководство по восточной музыке. Перевод с западноармянского, послесловие и комментарии Н.К. Тагмизяна. Е.: изд-во АН АрмССР, 1998; *Սուշեղյան Ա.* Համբարձում Զերյանը և Արմաշի դպրոցը, Ե., 1998; *Արևշատյան Ա.* Գրիգոր Գապասարայյանի երաժշտագիտական ժառանգությունը, Եր., «Գիտություն», 2013; *Սուշեղյան Ա.* Հայ երաժշտատեսական մտքի եթևական միտումները XVIII դարում // Կոմիտասը և միջնադարյան երաժշտական մշակույթը. Եր., Կոմիտասի թանգարանինստիտուտի իրատ., 2016, էջ 341—362; *Գրիգոր Ղալասակալյան*, Книга о музыке, где содержатся вопросы и ответы на армянском, греческом и персидском языках, перевод с грабара и введение А.С.Аревшатян, примечания А.С. Аревшатян и Л.Օ. Акопяна, Е: Гитутюն, 2017.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԳՐԻԳՈՐ ԳԱՂԱՍԱՔԱՅԱՏԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Գրիգոր Գաղասաքայյանը (1740-1808) XVIII-XIX դարերում Կ.Պոլսում գործած այն մտավորականներից է, ում վաստակը ըստ արժանվույն դեռևս չի գնահատվել, իսկ զիտական ժառանգությունը լրջորեն սկսել է ուսումնասիրվել Վերջերս: Այնինչ, իբրև Վերանորոգության շրջանն ամփոփող երաժիշտ-տեսաբան, Գր. Գաղասաքայյանը բողել է մի շարք աշխատություններ, որոնք ուշագրավ են որպես ազգային երաժշտական մշակութային ծառացած խընդիրների և արևելաքրիստոնեական ժողովուրդների համընդիանուր նմանատիպ հարցերի ծիրի մեջ գտնվող մտահոգությունների արտահայտություն: Նրա գրչի արգասիքն են՝ «Գրքոյի որ կոչի Նուազարան» (1794), «Գրքոյկս կոչեցեալ երգարան», «Գիրք երաժշտական, յորում պարունակին չայերէն, Յունարէն եւ Պարսկերէն հարցմունք եւ պատասխանատութիւնք համառօտարաք» (1803), ինչպես նաև՝ Ն.Թահիմիզյանի երատարակած «Համառօտութին երաժշտականի զիտութեան» և առաջին աշխարհամարտի ընթացքում անհետ կորած «Գիրք ութից ձայնից» (1805) աշխատության ձեռագիրը, որոնք որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն հայ երաժշտական տեսագեղագիտական մտքի պատմության ուսումնասիրության համար, այլ նաև համեմատական ուսումնասիրությունների տեսակետից:

⁹ Գրիգոր Գաղասաքայյանի մասին Տե՛ս Հիսարլեան Ա. քհն. Պատմութիւն հայ ձայնագրութեան եւ կենսագրութիւնք երաժիշտ ազգայ-

Պետք է նշել, որ XVII-XVIII դարերում Կոստանդնուպոլիսում ստեղծվել են Արևելքի ավանդական երաժշտության տեսագեղագիտական պատկերացումներն ընդհանուրացնող տարբեր ձեռնարկներ, ընդ որում դրանք ստեղծվել են Օսմանյան կայսրությունում ապրած և հաճախ իսլամացված քրիստոնյա ազգերի ներկայացուցիչների կողմից: Հիշատակելի է, օրինակ, Եվրոպական նոտագրությամբ ձայնագրած մակամների առաջին արժեքավոր ժողովածուն, որի հեղինակը՝ Ալբերտ (Վոյցեխ) Բորովսկին (1610-1675), տասնութ տարի ծառայելով որպես թարգմանիչ և պալատական երաժիշտ Մեհմետ IV սուլթանի պալատում, հայտնի է Ալի Ուֆկի անունով: Հիշարժան է մի փոքր ավելի վաղ ապրած հույն դպրապետ Կոնստանտինոս Պրոտոպ-

նոց. 1768-1809, Վ. Պոլիս, 1914, էջ 20—22; *Մելիքեան Սպ. Յունական ազրեցութիւնա հայ երաժշտութեան տեսականի վերայ*, Տիֆլիս, 1914, էջ 26-55; *Արայան Ռ. Գրիգոր Գապասակալյանը և խազարանությունը*, «Բանքեր Մատենադարանի», հ. 5, 1960, էջ 165-176; Թահմիզյան Ն. Գրիգոր Գապասաքալյանի «Համառութիւն երաժշտականի գիտութեան» , հ. 11, 1973, էջ 291-334: Արևշատյան Ա. Գրիգոր Գապասաքալյանի երաժշտագիտական ժառանգությունը, Երևան, 2013; Նույնի, Զայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում, Ե., Գիտություն, 2013, էջ 156—176; *Արևշատյան A.* По следам музыковедческих изысканий Комитаса. Актуальные проблемы изучения церковно-певческого искусства: наука и практика // Гимнология, вып. 6, М.: Научно-Издательский центр «Московская консерватория», 2011. С. 43-54; её же, «Книга «Восьмигласия» Григор Гапасакаляна как обобщение музыкально-теоретической мысли средневековой Армении // Теория и история монодии. Доклады международной конференции. Вена 2012. Т. 7/1. Брно, 2014. 2014. С. 49—59; её же, Учение о гласах в средневековой Армении, Е.: Гитутюн, 2020. С. 148—185; *Arevschatjan A. Das Buch der Acht-Echoe-Systems von Grigor Gapasakaljan als Zusammenfassung des Musiktheoretischen Gedankenguts des Mittelalterlichen Armenien // Theorie und Geschichte de Monodie. Bericht der Internationalen Tagung*, Martin Czernin und Maria Pischlöger, Wien 2012, band 7/1. Брно, 2014, S. 37—47.

սալտեսի գրած թամբուրի ձեռնարկը: Այս համատեքստում ամենանշանակալի դեմքը մոլղավացի իշխան, հետազայում հանրագիտակ գիտնական և խոշոր քաղաքական գործիչ, Պետրոս Մեծի գործուն աջակից Դմիտրիի Կանտեմիրն էր (1673-1723), ով որպես պատանդ ըստ ընդունված սովորույթի հոր՝ Սոլյովյովի վրեկողա Կոնստանտին Կանտեմիրի կողմից տակավին պատանի ուղարկվել էր Կոստանդնուպոլիս: Քսաներկու ձիգ տարիներ անցկացնելով (դրանցից երեքը՝ Ահմեդ III սուլթանի պալատում) և փայլուն կրթություն ստանալով Պոլսի հույն պատրիարքարանին կից ուղղափառ Ճեմարանում, նա ի թիվս մի շարք աշխատությունների, հեղինակել է նաև թուրքական երաժշտության տեսությանը նվիրված երկու գիրք և ստեղծել արաբական այրութենի վրա հիմնված նոտագրություն, այդպիսով մեծապես նպաստելով թուրքական ավանդական դասական երաժշտության զարգացմանը¹⁰:

XVIII դարի առաջին կեսում Պոլսում գործել են նաև հայ երաժիշտներ: Դրանցից ամենանշանավորը թերևս Թամբուրի Հարութինն էր, ով հեղինակել է «Արևելյան երաժշտության ձեռնարկ»-ը գրված հայատառ թուրքերենով¹¹: Թամբուրի Հարութինի գրչին է պատկանում հայագիտությանը վաղուց հայտնի «Պատմութիւն Թամազ Ղուլու» երկը, որը պարունակում է հեղինակի կենսագրությանը վերաբերող որոշ շահեկան տեղեկություններ: Ինչ-


¹⁰ Դմ. Կանտեմիրի կյանքի և ստեղծագործական ժառանգության մասին մանրամասն տես *Popescu-Judetz E. Prince Dimitrie Cantemir. Theorist and Composer of Turkish Music.* Istanbul: Pan Beşiktaş, 1999.

¹¹ Տես *Тамбурсист Арутин.* Руководство по восточной музыке. Перевод с турецкого, предисловие и комментарии Н.К. Тагмизяна. Е.: изд-во АН АрмССР, 1968; տես նաև՝ *Popescu-Judetz E. Tanburî Küçük Artin. A Musical Treatise of the Eighteenth Century.* Istanbul, Pan Beşiktaş, 2002.

պես նշել է Ն. Թահմիզյանը. «Հստ այդ աղբյուրների Թամբուրի Հարութինը XVIII դ. 30-ական թվականներին ծառայելիս է եղել սովորան Մահմուդ Ա-ի (1730-56), որտեղ ժողովրդականություն է վայելել որպես սիրված թամբուրահար և երգիչ»¹²: Լինելով իր ժամանակի ու միջավայրի գրագետ մարոկանցից մեկը՝ Թամբուրի Հարութինը տիրապետել է մի քանի արևելյան լեզուների և մեծ հակում է ունեցել դեպի գիտությունը: 1736-ին Թուրքիայի մեծ վեզիր Մուսաքանչաղ փաշայի շքախմբի կազմում ուղևորվել Իրան, երկու տարի ծառայել Նադիր շահին՝ նվազելով ու երգելով նրա պալատում: Այստեղ էլ հորինել է իր վերոհիշյալ երկերը, դաստիարակել աշակերտներ: Ի մոտոն ծանոթացել է պարսկական մասնագիտացված երաժշտությանը, շփվել պարսից արքայի պալատում ծառայող հայտնի երաժիշտների հետ: Վերադառնալով Պոլիս՝ շարունակել է իր գործունեությունը որպես սազանդար-աշուտ, թամբուրահար, երգիչ, տեսարան և մանկավարժ¹³: Թամբուրի Հարութինի Զեռնարկը հայ երաժիշտների մուղամաթի արվեստի ինչպես տեսական, այնպես էլ գործնական ոլորտներում ունեցած ներդրման խոտուն վկայություններից է:


¹² Тамбурсист Арутин. Руководство по восточной музыке. С. 141.

¹³ Թամբուրի Հարութինի ստեղծագործական գործունեության մասին ավելի մանրամասն Տե՛ս Արեշատյան Ա. Զայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում. Ե., Գիտություն, 2013, էջ121—125:




Մի էջ Թամրուրի Հարութինի «Mûsikî Edvâri» («Զեռնարկ [արևելյան] երաժշտության») գրքից (fol. 10a)¹⁴

¹⁴ Լուսապատճենը՝ Ե. Պոպեսு-Յուդեցի (E. Popescu-Judet) Tanburî Küçük Artin. A Musical Treatise of the Eighteenth Century. Istanbul, Pan Beşiktaş, 2002. P. 23.



Մի էզ Կոնստանտինոս Պրոտպատրիքի Երմηնեա զրքից, 1843 թ.,
էջ 84—85 (Սուրադ Բարդակչի հավաքածուից)¹⁵

¹⁵ Լուսապատճենը՝ Ե. Պոպեսு-Ջուդեժ (E. Popescu-Judet), Tanburî Küçük Artin. A Musical Treatise of the Eighteenth Century. P. 144:



Մի էջ Շերվիշ Սեհմեղ Էմինի *Risale-i fenn-i müsikî qrrphg'* թամրուրի և իր
ձայնաստիճանների պատկերով, 1780 թ. fol. 3b¹⁶:

Հանդիսանալով միջնադարյան երգարվեստի ավանդույթների վերջին կրողներից մեկը (Եթե չասենք վերջին կրողը), Գապասաքայյանը քաջ զիտակցել է ազգային մասնագիտացված երաժշտարվեստին սպառնացող վտանգները, անցյալի ժառանգության՝ տեսական և գործնական փորձի պահպանման և փոխանցման կարեւորությունը, ինչը ձգտել է վավերացնել և յուրովի իմաստավորել իր

¹⁶ Լուսապատճենը՝ Ե. Պոպեսு Ջուդեցի (*E. Popescu-Judet*), Tanburî Küçük Artin. A Musical Treatise of the Eighteenth Century. P. 143.

աշխատություններում: Այդ նպատակին է ծառայել նաև երաժշտական նշանագրության իր առաջարկած համակարգը, որը թեև չարմատավորվեց, սակայն խթան հանդիսացավ Համբարձում Լիմոնջյանի հայկական նոր նոտագրության ստեղծման համար:

Գապասաքայյանին վերաբերող գրականությունը, կարելի է ասել, սակավաթիվ է: Նրա անձին և աշխատություններին անդրադարձել են Սրիստակես Հիսարյանը, Կոմիտասը, Սպիրիդոն Մելիքյանը, մեկական առանձին հոդվածներով՝ Ռոբերտ Աթայանը և Նիկողոս Թահմիզյանը:

Երաժշտագետի ժառանգության գնահատականը միշտ չէ, որ եղել է միանշանակ և համարժեք: Նրա ժառանգության ոչ արդարացի, ոչ օբյեկտիվ գնահատականը, մեր կարծիքով, մեծ մասամբ պայմանավորված է եղել աստվածաբանական տարրի զգալի ներկայությամբ, ինչն ընկալվել է որպես հետադիմիկան, հավանաբար, XVIII դ. եվրոպական գեղագիտության և երաժշտագիտության միտումների համեմատությամբ իր դարն ապրած չոր սփողաստիկայի դրսեորդում: Այուս պատճառներից, հավանաբար, կարելի է նշել նրա լեզուն, երբեմն բավական խճողված, վերամբարձ և պաճուճազարդ գրաբարը, որը ևս ընկալման և թարգմանության համար դժվարություններ է հարուցում: Եվ վերջապես, իր հունասիրությունը, որ միշտ չէ, որ բոլորին է գոհացրել:

Ներկայումս Գր. Գապասաքայյանի ժառանգությանը պետք է տրվի համարժեք, իր ժամանակի և միջավայրի պատմական համատեքստից բխող գնահատական, երբեք չմոռանալով, թե ի՞նչ էր իրենից ներկայացնում XVIII դ. երկրորդ կեսի, XIX դ. սկզբի Կոստանդնուպոլիսը եկեղեցական

Երաժշտության առումով, թե ի՞նչ խնդիրներ էին ծառացած այն ժամանակի եկեղեցական երաժիշտների առջեւ:

Ամեն ինչից երեսում է, որ Գապասաքայյանն առաջին հերթին հիմնավոր աստվածաբանական և փիլիսոփայական կրթություն է ստացել: Նրա գիտապաշարը, հղած հեղինակների շրջանակը երբեմն զարմացնում են: Եթե հայ միջնադարյան մտածողներից առավել հաճախակի հիշատակվող հեղինակներից են Դավիթ Անհաղթը, Հովհաննես Երզնկացի Պլուզը, Հովհաննես Որոտնեցին ու Գրիգոր Տաթևիցին, ապա համաքրիստոնեական նշանակության հեղինակներից կարելի է մատնանշել Պորֆիրին, Պրոկրին, Բարսեղ Կեսարացուն, Գրիգոր Նյուսացուն, Օգոստինոսին և Իրենեոսին, որոնց երկերում նա առանձնացրել է երաժշտության տեսությանն ու գեղագիտությանը վերաբերող հատվածները, ինչը վկայում է Գր. Գապասաքայյանի՝ այդ ժառանգությանը հավասարապես տիրապետելու մասին: Այնուհետև դա երաժշտական տեսական և գրծնական լուրջ պատրաստվածությունն է (այն ժամանակվա չափանիշներով), որն ընդգրկել է հայկական, հունական, (ուշյուղանդական) և պարսկա-արաբական ավանդական տեսությունը, ինչպես նաև այդ մշակույթների մոնողիկ մասնագիտացված երգարվեստի բազմաթիվ նմուշների լայն երգացանկը:

Հայ երաժշտական մշակույթի պատմության մեջ Գրիգոր Գապասաքայյանը հայտնի է որպես միջնադարյան խազագրությունը նորոգելու նախաձեռնողներից առաջինը: Օսմանյան դարավոր տիրապետության և իսլամական շրջապատում գոյատևող քրիստոնյա ազգերի համար զնալով ավելի դժվար էր դարնում անաղարտ պահել սեփական

ազգային մշակութային, մասնավորապես, երաժշտական ժառանգությունը:

Գրիգոր Գապասաքայյանի առաջին հրատարակված աշխատությունը, որը լույս է տեսել Վ.Պոլսում 1794 թվականին, կոչվում է «Գրքոյն որ կոչի Նուազարան»: Այն բացվում է տաղարանով, որն ընդգրկում է ինչպես հոգևոր, այնպես էլ՝ աշխարհիկ տաղեր: Աշխատությունը բաղկացած է երկու մասից՝ տեսական և գործնական: Տեսական մասը լուսաբանում է հոգևոր երգարվեստի զանազան բաժինները, սկսած երաժշտության ծագումից և տեսակների դասակարգումից մինչև խազարանություն: Երաժշտության ծագումնաբանությանը նվիրված բաժնում գտնում ենք «Յադագս ձայնից» հինավորց մեկնության վերապատմված տարբերակը: Բնագիր, որին Գլ. Գապասակայյանն ավելի մանրամասն անդրադառնալու էր հետագայում և՝ «Գիրք երաժշտական»-ում, և «Գիրք ութից ձայնից»-ում:

Արդեն նախաբանում Գապասաքայյանը մի քանի անգամ շեշտում է այն հանգամանքը, որ տվյալ ձեռնարկի հիմնական և վերջնական նպատակը խազերի ուսուցանումն է: Եվ իրոք, աշխատության երկրորդ մասում տեսնում ենք խազային նոտագրությամբ արված ձայնագրություններ, որոնց բնույթ ինչպես հանրահայտ՝ բանավոր ավանդություն մեղեղիներով հանդերձ պահպանված տաղեր, այնպես էլ՝ Գանձարաններից հայտնի՝ խազագիր, բայց լոկ բանաստեղծական բնագրեր:


Գապասակայյանի կիրառած նոտագրության վերաբերյալ տույն հեղինակի մասին գոյություն ունեցող գրականությունը (Հիսարյան, Աթայան, Թահմիզյան) ի վերջո հստակ պատկերացում չեր տալիս այն մասին, թե ի՞նչ նոտագրություն է գործածել նա: Նշվում էր միայն, թե այն

հայկական խազերի, բյուզանդական նևմաների և արևելյան ավանդական նշանագրությամբ շաղաղված մի սիստեմ է¹⁷: Ուստի հարկ եղավ պարզելու, թե ի՞նչ է այն իրենից ներկայացնում իրականում: Մանրակրկիտ ուսումնասիրութունը ցույց տվեց, որ դա, ըստ Եության, հայկական խազերով և բյուզանդական նևմաներով իրագործվող մի գուգահեռ նշանագրություն է, որտեղ ակնհայտորեն երևում է Գապասակալյանի ձգտումը համապատասխանեցնելու հայկական խազերը բյուզանդական նևմաների ինտերվալային նշանակությանը¹⁸: Դրա վառ ապացույցն են Գապասաքալյանի հենց առաջին՝ «Գրքոյի որ կոչի Նուազարան» աշխատության մեջ գետեղված ձայնագրությունները: Կան նաև ձայնագրություններ, որոնց մեջ գերակշրում են հունական նևմաները կամ հակառակը: Մեր դիտարկումներն ապացուցում են, որ Գապասաքալյանը կիրառել է ձայնագրության երկու տեսակ՝ գուգահեռ և համադրված, թեև գերակշռող գուգահեռ ձայնագրությունն է: Դա հաստատվում է «հանդերձ ձայնի եւ խազիւր խառն ընդ յունաց» իր իսկ արտահայտությամբ¹⁹: Ներմուծել է նաև նոր նշաններ, օրինակ, ասու կոչվածը, որը հունական խոնին (էօսών) համարժեք նշան է: Սակայն եթե հունական խառնը բյուզանդական երգարվեստում լայնորեն կիրառվող ձայնառությունն է, ասուն Գապասակալյանն անվանում է անձայն խազ, ուստի մինչև վերջ հստակ չէ նրա նշանակությունը:

¹⁷Տե՛ս Ն. Թահմիզյան, նշվ. հոդվածը, էջ 294:

¹⁸Ի դեպ, այդ ճանապարհով է ընթացել նաև Կոմիտասը: Այդ են ապացուցում նրա խազարանական ուսումնասիրությունները, տե՛ս Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ երկու գրքով, գիրք Բ, էջ 339—446, 392—398, 408—417:

¹⁹Տե՛ս Գրքոյի որ կոչի Նուազարան, Կ.Պոլիս, 1794, էջ 218:



Նմուշ Գր. Գապասաքայյանի նոտագրությունից

Սույն աշխատության մեջ Գապասաքայյանն անդրադարձել է նաև տարբեր ազգերի երաժշտական նվագարաններին՝ պսալտերին, քնար, ջնար, քիթար, սանթուր, սրինգ, նայ, դարնայ և այլն, տալով դրանց նկարագրությու-

նը: Ուշագրավ է, թե ինչպես է Գապասաքայյանը խոսում հայ առաքելական եկեղեցում հնչող երաժշտության կիրառվող գործիքների մասին. «...ի միջի Հայաստանեայց եկեղեցւյ գտանի մասն ինչ նուազարանաց գործիք, որ նպաստ արկանէ ասութեանց, որպէս զանգակն, ծնծղայն և քշցն բոժնժազարդ և ոքք զարդ եկեղեցական արարողութեան և օժիտ ձայնի երգոցն եղանակաց, որ է արհեստն երաժշտականութեանց»²⁰: Արան հաջորդում է երաժշտության ներազդող ուժի մասին հիշեցումը, որն ի վիճակի է նույնիսկ հեղաշրջել մարդուն. «Արդ՝ զի յոյժ օօրաւոր է երաժշտականն երգ զգորութիւն հոգւոյ յեղաշրջել անդ ձայնին որպէս և ազդէ ասացաւ, տրտմութիւն կամ խրախութիւն»²¹:


«Գրքոյկ որ կոչի նուազարան» աշխատության տեսական բաժնի ամենաընդարձակ բաժինը նվիրված է խազագիտությանը, ընդ որում սկզբից մանրամասնորեն տրված է հունական (բյուզանդական) նևմաների բացատրությունը, իսկ հետո՝ հայկական խազերի, երկու դեպքում էլ՝ սկսած պարզագույններից մինչև բարդագույնը, այսինքն՝ *մեզայի իպոստազիզ* կամ *մեծամեծ խազեր* կոչվածները, ինչպես նաև դրանց ածանցյալ խմբավորումներն ու տառ-խազերը, որոնք կիրառվել են հիմնականում մանրուսման երգերը ձայնագրելիս: Հատվածն ավարտվում է մի շարք խազագրված տաղերի *մեջբերումով*, որոնք ձայնագրված են զուգահեռ՝ հայկական խազերով և հունական նևմաներով: Ուշագրավ է, որ վերոհիշյալ 10 նմուշներից 4-ը պահպանվել են նաև բանավոր ավանդույթով և գրառվել նոր հայկական նոտագրությամբ:

²⁰Տե՛ս Գրքոյկ որ կոչի Նուազարան, էջ 181:

²¹Նույն տեղում, էջ 179:

Ուշագրավ են Գապասաքայյանի աշխատություններում տեղ գտած մի քանի ձայնեղանակային սխեմաներ, որոնք կոչված էին երգեցողների հիշողության մեջ ամրապնդելու սկսվածքների ուսուցումը։ Նրա գրքերում զետեղված անվաճելու պատկերները, Բյուզանդիայում XIII-XIV դարերից եկեղեցական երգարվեստի պյառակտիկայում լայնորեն կիրառվող այսպես կոչված Կուկուզելիսի²² անհիվի նմանությամբ են գաղափարված։ Եվ իրոք, օրինակ, Գապասաքայյանի «Գրքոյկ որ կոչի Նուազարան»-ում կողք կողքի բերված են հունական Օկտոհիխոսի և հայկական Ութձայնի սկսվածքները։ Մեկ այլ տեղում տեսնում ենք շրջանագծի մեջ տեղադրված խաչաձև՝ հայկական բուն և կողմ ձայնեղանակների և արեւելյան մակամների հարաբերակցությունը չորս տարերքների հետ պատկերող մի գծանկար, որն առնչվում է անտիկ կատարյալ ռեզիստրային լադային համակարգի հետ։ Նմանատիպ պատկերի ենք հանդիպում նաև Գապասաքայյանի «Գիրք երաժշտական»-ում՝ և «Գիրք ութից ձայնից» աշխատության մեջ, որի մասին պատկերացում ունենք Տրդատ եպս։ Պայյանի նկարագրությունից «Այս է ճախարակ որ շինէ զձայնս» ստորագրությամբ։

²² Յոհաննիս Կուկուզելիս (1280-1360) – ազգությամբ բուլղարացի հիմներգու, երգեցող և տեսարան, բյուզանդական հոգևոր երգարվեստի նշանավոր ներկայացուցիչներից, ում ստեղծագործությունը դարակազմիկ նշանակություն է ունեցել և մեծապես ազդել է հետնորդների վրա։



**Գ. Գապասաքայանի երկերում բերված սկսվածքների
սխեմաները**

Գրիգոր Գապասաքայանի հաջորդ աշխատությունը «Գրքոյկա կոչեցեալ երգարան»-ն է, որտեղ առաջին բաժինը դարձյալ տաղարան է: Այն բացվում է հենց իր՝ Գապասաքայանի գրչին պատկանող մի շարք անվանական ծայրակապ ունեցող հոգեսոր և աշխարհիկ բովանդակության երգերով (Ի ԳՐԻԳՈՐ ԴՊՐԵ, Ի ԳՐԻԳՈՐԵ և այլն), ինչպես, օրինակ, «Աղերս առ սուրբ Հոգին Աստուած», «Ի վերայ երկնի», «Ի վերայ ծովու», «Առ հայրն երկնաւոր» և այլն: Բոլոր

նմուշներն օժտված են կաֆաներով, բանաստեղծական մի ավանդույթ, որը չափազանց տարածված էր ուշ միջնադարյան հայ պոեզիայում²³: Ուշագրավ է, որ մեծ մասամբ հենց կաֆաներում է հեղինակը հիշատակել տվյալ նմուշների ձայնեղանակները, որոնք տրված են ըստ արևելյան ավանդական մակամների²⁴ և ուսուների²⁵ համակարգի, այսպես. «Առ Հայրն երկնաւոր. կաֆա. Ըստահան է՝ լուր ինձ սէր իմ» կամ «Յորդորակ վերնոյն. Սա՛ ես ձայնի՛ ըստահանի», «Մրբոյն կուսին. ի գոյն շեհնազի երգի», «Առ բանն Աստուած. կաֆա. Ուսուլ հաֆիֆ՝ որոտան, և՛ սէֆայի արզընտան» և այլն:

Գրքի առաջին բաժնում, այսինքն, տաղարանում Գապասաքայանն ընդգրկել է նաև մի շարք հայտառ հունարեն հանրահայտ, հաճախ կանոնական հոգեւոր երգեր իրենց հայերեն թարգմանություններով, որոնց հետեւում են այդ երգասացությունների ձայնեղանակներին վերաբերող կաֆաներ, այսպես.

«Երգյունարէն.
Վասիկու ուրա՞նիկ բարա՞զիկէ

²³ Կաֆաների մասին մանրամասն տե՛ս *Սիմոնյան Հ. Հայ միջնադարյան կաֆաներ* (Վ-ԽՎդ.), Եր., 1975:

²⁴ Սակամ – որոշակի լադային հիմք ունեցող մեղեդային դարձվածք: Իրեն ժողովրդա-պրոֆեսիոնալ արվեստի ժանր հատուկ է արարական, թուրքական և իրանական դասական մոնողիկ երաժշտությանը (տես «Սակամ» հոդվածը՝ Հայկական Սովետական Հանրագիտարան (այսուհետ՝ ՀԱՀ), Եր., 1981, հ. 7, էջ 169; տե՛ս նաև «Սուլամ» հոդվածը ՀԱՀ, Եր., հ. 8, 1982, էջ 77—78):

²⁵ Ուսուլ (արաք. բառացի՝ հիմնական դրույթ, օրենք) – արևելյան բանավոր ավանդույթի պրոֆեսիոնալ երաժշտության ոիթմական դարձվածք, որը ստեղծագործության ընթացքում կրկնվում է որոշակի մետրի սահմաններում (տես «Ուսուլ» հոդվածը ՀԱՀ, հ. 12, Եր., 1986, էջ 263-264):

Դօքնեւմա դիս ալիթիս...²⁶

Հայերէն վերնոյն.
Թագաւոր երկնաւոր,
Մխիթարիչ Հոգիդ ճշմարտութեան:

Ճիճազ ձայնի երգաբանի:
Վայելաբար եղանակի:

Երգ ասսուածածնի.
Մքսիօն էռդինու ալիթօս,
մազարի ինու դին թէօդը՝ գօն...

Հայերէն վերնոյն.
Վայելու արժան է ճշմարիտ գուութեամբ
զքեզ գուել ասսուածածին...

Ճիւզզամ գունով՝ եղանակի...

Երգ յունարէն.
Գի՞րիէ էզէզիազաս բրոսէ,
իսազուօն մու...

Հայերէն վերնոյն.
Տէ՛ր կարդացի առ քեզ,
լուր ինձ, լուր ինձ...

Երգս է՛յունաց՝ երեկոյին,
Յաւէն երգէն ըստ ութից ձայնին:
(...)
Սուլը, սուլը յունարէն.
Այհօս, Այհօս, Այհօս,
Գի՞րիս Սավկառը,

²⁶ Անփոփոխ ենք թողել Գապասաքայլանի գրության ձևը, արևմտահայերենին բնորոշ հնչունաբանությամբ:

փլի՞րիս օ' ուրանու դէ իյի դիս տօ՛քսիօսու.
Օսաննա' էնդիս փսխսդիս...

Լոյս զուարթ յունարէն.
օս իլարօն՝ այհօս դոքսիս,
աթանա' դու բաղրօս:

Համեղագոյն՝ ձայնիս երգէն,
Հստ արհեստին՝ եղանակէն:

Երգ Յարութեան.
Խրիսդոս՝ նէօյի էքնէքրօն,
թանա' դո թանարօն արեսաս,
Դէ՝ դի՞ս էն դի՞ս մնիմասի զօին խրիստեօս:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
մահուամբ զմահ կոյսեաց.
և ի գերեզմանի եղեալ զննզքեցելոցսն յարոյց:

Փառք ի բարձունս յունարէն, խառն ի մերումս՝ որ ըստ նկա-
րագրին:

Տօ՛քսա էնիփսիս դիս թէօ,
գէ՝ էրիյիս իրինի էն անթրոպոս էւսօրի՛ա:

Փա՞ռք ի բարձունս աստուծոյ,
և յերկիր խաղաղութիւն. և ի մարդիկ
հաճութիւն...

Սորա երգըն՝ լինի խազիք՝ զանազան:
Մինչ ութ ձայնից՝ երգարանի աննըման:
ևս այլայլի ի նրկարազիրն՝ որ ի երգս:
Որ յայտ անտի՝ է բանիբուն յերաժիշտս²⁷ և այն:

Արանց հետևում է կինոնիկոն ժանրին պատկանող մի երգ՝

²⁷ Նույն տեղում, էջ 89-100:

«Գիմօնիցո յունարէն.
Էնի՞դոն զիրիօն էզ դոն ուրանօն,
անէնա նէնէնա, նէնա.. ալիլուխա: (ԳՎ)

Ophnnegek'p q Utkr jekrlyhnu. anekna... alilulukha:

Սա՛ է եկեղեցական արարողութիւն:
Հստ ուրից ձայնից՝ երգէն զարքերգութիւն»²⁸:

Այնուհետև դարձյալ հայատառ հունարենով շարադրված են պատարագի մի շարք երգեր և տաղեր, որոնք օժտված են ձայնեղանակային ցուցիչներով՝ «Ծաքեզ օրինեմք», «Փառք Հօր, և Որդույ, և Սրբոյ Հոգույ», «Երգ սրբոյն Հովհաննու Կարապետին», «Երգ սրբոյն Բարսեղի Կեսարացւյն», «Երգ սրբոյն Գրիգորի», «Երգ սրբոյն Յոհաննու Ռոկեբերանի», «Երգ սրբոյն Խաչին», «Տաղ Բձ», «Տաղ Բկ», «Երգ Բձ», «Երգ Աձ», «Երգ Գձ», «Երգ Գկ» և այլն²⁹:

Տեսական բաժինը, ի տարբերություն 1794 թ. երատարակած «Գրքոյկ»-ի, շարադրված է հարց ու պատասխանի ձևով: Այստեղ Գապասաքայյանն անդրադարձել է երաժշտության տեսակներին, զատորոշելով դրանք երեք տեսակի՝ նվազական, եղանակական և սրնգական: Նվազականն իր հերթին բաժանվում է ևս երեք տեսակի՝ «ի ձայն, ի փշումն և ի բաղխումն: Առաջինն, է՛ այն, - զրում է Գապասաքայյանը, - զոր միշտ երգեմք ձայնիւ հնչմանց. որպիսի է տաղն, մեղեղին և շարականն», այսինքն՝ առաջնությունը տրվում է վոկալ, ձայնային երաժշտությանը կամ երգեցողությանը: Երկրորդ՝ սրնգական տեսակին են պատ-

²⁸ Նույն տեղում, էջ 104:

²⁹ Նույն տեղում, էջ 104-110:

կանում եղեգնափողը, սրինգը «և այլ սոցին նմանք», այսինքն՝ փողային գործիքները: Երբորդ տեսակին են պատկանում, ըստ Գապասաքայյանի, սաղմոսարանը, քնարը, ծնծղան և այլն, «զոր ձեռօք ի գործարկեալ քաղցրանուագ արձակել տան զձայն»^{30:}

Գապասաքայյանը բաժանում է երաժշտությունը նաև ըստ բնույթի, հետեւյալ կերպ՝ անհամեստ, համեստ և բարի: Նշելի է, որ նմանատիպ ստորաբաժանմամբ նա ընդհանուր առմամբ հավատարիմ է մնացել հայ միջնադարյան երաժշտական գեղագիտության ավանդույթներին՝ Դավիթ Անհաղթից մինչեւ Հակոբ Դրիմեցի և Խաչատուր Էրզրումեցի: Մրան հետեւում է ձայնեղանակների ուսուցմանը նվիրված հատված, ուր հստակորեն դրսուրվում է այն մեթոդը, որով դարեր շարունակ առաջնորդվել են մեր եկեղեցական երաժիշտները, այն է՝ Ուրծայնի սկսվածքների յուրացումից աստիճանական անցումով պաշտոներգության տարբեր օրիներգությունների ուսուցմանը:

Գրքի վերջում Գապասաքայյանը գետեղել է հունարեն-հայերեն-պարսկերեն-արաբերեն-թուրքերեն մի բառան՝ «Հաւաքումն բարից» ի միջի սորա, կամ արտաքոյ եղելոյն համառօտաքար ըստ այբբենական կարգի», ինչից հետեւում է, որ նա զբաղվել է նաև բառարանագիտությամբ: Այստեղ մեջբերված են ինչպես հոգևոր երգասացություններում առավել հաճախ հանդիպող բառերը, այնպես է՝ երաժշտատեսական մի շարք եզրույթներ, այսպես. «Այի՞ս, սուրբ, շերիֆ, ազիզ, բար, գուտս» կամ «Աթա՞նատոս. Անմահ, պոմեվթ, էզիւմսիւզ» և այլն^{31:} Բառարանն ավարտվում է «Հայր մեր»-ի հունարեն, հայերեն և տաճկերեն տարբե-

³⁰ Գրքոյն կոչեցեալ երգարան, Կ. Պոլիս, 1803, էջ111:

³¹ Նույն տեղում, էջ 142:

բակներով (հունարենն ու տաճկերնը հայատառ են): Այդ բառարանը իր ժամանակի թերևս ողջ Մերձավոր Արևելքում այդ բնույթի թերևս առաջին նման բառարանն էր:

Այսպիսով, առաջին երկու գրքերում արդեն լիովին դրսերքում է Գապասաքայյանի ստեղծագործական-գիտական հետաքրքրությունների շրջանակն ու ընդունումը, նրա մանկավարժական մեթոդը, որը հստակ պատկերացում է տալիս այն մասին, թե ի՞նչ ձովն և ի՞նչ է ուսուցանվել XVIII դարի Կոստանդնուպոլսում հայ եկեղեցական երաժիշտների միջավայրում:

Հիրավի, 1803 թվականը Գապասաքայյանի կյանքում եղել է ամենաբեղմնավորը: Այդ թվականին նա լույս է ընծայել ոչ միայն «Գրքյկս կոչեցեալ երգարան»-ը, «Նուազարան երաժշտական»-ը, այլ նաև ծավալուն «Գիրք երաժշտական»-ը, որն, ըստ Էուլյան, որոշակի իմաստով ի մի է բերում նրա երաժշտագիտական փորձը:


«Գիրք երաժշտական»-ը մեր երաժշտագիտության մեջ Գապասաքայյանի թերևս առավել հաճախ արծարծվող աշխատությունն է: Այն ևս բաղկացած է երկու մասից, որոնցից առաջինը տեսական է, իսկ երկրորդը կրում է «Նուազարան երաժշտական» վերնագիրը, Տաղարան ներկայացնելով: Արդեն գրքի լրիվ վերնագիրը պատկերացում է տալիս հեղինակի ուսումնասիրության հիմնական նպատակի մասին, կրելով «Գիրք երաժշտական յորում պարունակին Հայերէն, Յունարէն եւ Պարսկերէն հարցմունք եւ պատասխանատութիւնք համառօտաբար» վերնագիրը: Հայ իրականության մեջ աննախադեալ մի ձեռնարկ, համեմատական երաժշտագիտության մի փորձ, որը վկայում է Գապասաքայյանի երաժշտական լայն գիտելիքների մասին: Բացառված չէ, որ իր երաժշտագիտական աշխատություն-

ները ստեղծելիս, Գապասաքայանը օգտվել է արդեն հիշատակված նշանավոր գիտնական և երաժիշտ մոլուգավացի իշխան Դիմիտրիե Կանտեմիրի աշխատություններից³²: Ի թիվս գիտության տարբեր ճյուղերին (փիլիսոփայություն, պատմագիտություն, աշխարհագրություն, մաթեմատիկա, ձարտարապետություն և այլն) նվիրված երկերի, Կանտեմիրը գրել է թուրքական դասական երաժշտության տեսությանը նվիրված երկու աշխատություն, որոնցից պահպանվել է միայն մեկը՝ «Գիրք երաժշտական գիտության» (*Kitâbu 'Ilmi'l - Mûsîkî 'alâ vechi'l-Hurûfât*) ձեռնարկը (1703—04)³³: Պահպանվել են նաև նրա հեղինակած պեշրեֆ և թաքսիմ տիպի թամբուրի համար զրած մակամները: Կանտեմիրը հավաքագրել է շուրջ 355 մեղեղիներ, կազմելով մի ժողովածու, որտեղ զետեղել է նաև իր ստեղծագործությունները. դրանք բոլորը ձայնագրված են իր հեղինակած՝ արաբական այրութենի տառերի վրա հիմնված նոտագրությամբ: Գուցե նոր նոտագրություն ստեղծելու Կանտեմիրի փորձը հուշել է Գապասաքայանին նմանատիպ մի նախաձեռնության գաղափարը: Համենայն դեպս, Օսմանյան կայսրությունում գործած այդ երկու ստեղծագործողների և երաժիշտ-տեսաբանների գիտական հետաքրքրությունների և ջանքերի ընդհանրությունը իիստ ուշագրավ է և մարմնավորում է իր ժամանակի բնորոշ միտումները և պահանջները: Անգամ նրանց հիմնական աշխատությունների («Գիրք երաժշտական գիտության» և «Գիրք երաժշտական»)

³² Դիմիտրիե Կանտեմիրի երաժշտական ժառանգության մասին մանրամասն տես *Popescu-Judetz E. Prince Dimitrie Cantemir. Theorist and Composer of Turkish Music.* Istanbul: Pan Beşiktaş, 1999.

³³ Տե՛ս *Kantemiroğlu D. Kitâbu 'Ilmi'l- Mûsîkî 'alâ vechi'l-Hurûfât. Vol. I-II. Ed. by Yalçın Tura.* Istanbul: Kitap Editörü, 2001.

վերնագրերի ընդհանուրությունը հուշում է ժամանակակից հետազոտողին, որ Գապասարալյանը ծանոթ է եղել իրենից հարյուր տարի առաջ գրված Կանտեմիրի երաժշտաւեսական տրակտատին³⁴:



Նմուշ Դմ. Կանտեմիրի նոտագրությունից

³⁴ Կանտեմիրի և Գապասարալյանի ստեղծագործական ձգումների ընդհանուրության մասին տես ու *Аревшатян А.С. Дмитрий Кантемир и Григор Гапасакалян — выдающиеся музыканты-теоретики Османской империи. Opera musicologica. Научный журнал Санкт Петербургской консерватории. СПб, 2021, N 3. С. 12—18.*

Պատահական չէ նաև, որ Գապասաքայյանի աշխատություններով, մասնավորապես, «Գիրք ութից ձայնից»-ով, շատ է հետաքրքրվել Կոմիտասը³⁵: Բանն այն է, որ Կոմիտասի խազագիտական ձեռագրերից պարզ է դառնում, որ խազարանության շատ հարցերում Գապասաքայյանը ուղեցույց է հանդիսացել Կոմիտասի համար³⁶:

Գրիգոր Գապասաքայյանի երաժշտագիտական ժառանգությունը նշանակալի տեղ է գրավում հայ երաժշտաւեսական մտքի պատմության մեջ, կարևոր օղակ հան-

³⁵ Այդ մասին տե՛ս *Արեշատյան Ա.* Կոմիտասի երաժշտագիտական ուսումնասիրությունների հետքերով // Հայ արվեստի հարցեր, 1, Եր., Գիտություն, 2006, էջ 50—64; նույնի, Գրիգոր Գապասաքայյանի «Գիրք ութից ձայնից» ձեռնարկը // Մանրուսում. Հոգևոր երաժշտության պատմության, տեսության և զեղագիտության հարցեր. Միջազգային երաժշտագիտական սարկեգիր, հ. Գ. Եր., Լիմուշ, 2009, էջ 214—234; *Արեշատյան Ա.* «Книга Восьмигласия» Григора Гапасакяна как обобщение музыкально-теоретической мысли средневековой Армении // Теория и история монодии. Доклады международной конференции. Вена, 2012. Т. 7/1/ Брюн, 2014. С. 49—59; *Arewsatyan A.* Sur les traces des études musicologiques de Komitas // REArm, 33, 2011, Paris. P. 315—328; *Արեշատյան Ա.* По следам музыковедческих изысканий Комитаса // Гимнология, вып. 6. М.: Научно-издательский центр «Московская консерватория», 2011. С. 43—54. *Arevschatjan A.* Das Buch der Acht-Echoe-Systems von Grigor Gapasakaljanնույնի als Zusammenfassung des Musiktheoretischen Gedankenguts des Mittelalterlichen Armenien // Theorie und Geschichte de Monodie. Bericht der Internationalen Tagung, Martin Czernin und Maria Pischlöger, Wien 2012, band 7/1. Brno, 2014, S. 37—47.

³⁶Տե՛ս *Aréwshatyan A.* Komitas and Gapasakalian: Neumological connections // Musicology Today: Musica Sacra. Bucharest, 2015. www.musicologytoday.ro/BackIssues/Nr.24/studies2.php; *Արեշատյան Ա.* Կոմիտաս վարդապետ և Գրիգոր Գապասաքայյան. խազագիտական առջնություններ // Կոմիտասական, 3. Եր., Գիտություն, 2019, էջ 62—76; *Արեշատյան Ա.* Учение о гласах в средневековой Армении, Е.: Гитутюн, 2020. С. 173—185.

դիսանալով միջնադարյան տեսագեղագիտական հայեցակարգերի և Նոր Ժամանակի երաժշտական մտածողության միջև։ Հսու Էռլիքյան, Գապասաքալյանը հայ նոր խազարանության սկզբնավորողն է եղել, իսկ նրա աշխատությունները միջնադարյան երաժշտական գիտական և գործնական տեսության հիրավի մի հանրագիտարան են ներկայացնում։ Ճենց դրանով կ հաստատվում է Գրիգոր Գապասաքալյանի՝ հայ իրականության մեջ առաջին մարդու, ով իրեն ամրողությամբ նվիրել է երաժշտական արվեստի ուսումնասիրմանը, դերն ու նշանակությունը ազգային երաժշտական մշակույթի անդաստանում, ներկայացնելով նրան որպես իր ժամանակի և միջավայրի ինքնատիպ երևույթ, նշանակալի գործից, ով փաստորեն հանդիսացել է Նոր Ժամանակի հայ երաժշտագիտության սկզբնավորողը։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԼԻՍՈՆՁՅԱՆԻ ՈՉ ԳԾԱՅԻՆ ՆՈՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՏԸ ԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես արդեն նշվեց, միջնադարյան խազային նշանագրության վերանայման անհրաժեշտության գիտակցումը Գաղասաքայյանի կողմից և նրա առաջարկած նոտագրությունը թեև չարմատավորվեց և անգամ ենթարկվեց քննադատության, սակայն նրա փորձերը մեծապես նպաստեցին և խթանեցին Պոլսում ապրած և գործած մյուս խոշոր երաժիշտ-տեսաբանի և ձայնագետի՝ Համբարձում Բաբա Լիմոնջյանի³⁷ (1768-1839) առաջ քաշած նոր հայկական ոչգծային նոտագրության ստեղծումը, նոտագրություն, որը հսկայական դեր խաղաց հայ միջնադարյան հոգևոր երաժշտական ժառանգության վավերացման և պահպանման գործում:

Տարկ է նշել, որ Գաղասաքայյանի ժամանակներում միջնադարյան նևմային համակարգերը Եվրոպայում և Միջին Արևելքում վաղուց ի վեր ճգնաժամ էին ապրում: Եթե Արևմտյան Եվրոպայում X-XI դարերից սկսած բազմաձայն երաժշտության նախնական տեսակների զարգացմանը զուգընթաց փորձեր էին արվում կատարելագործելու երաժշտական նշանագրությունը, ինչն ի վերջո հանգեց:

³⁷ Ըստ որոշ աղբյուրների՝ Հ. Լիմոնջյանը աշակերտել է նաև Գր. Գաղասաքայյանին, ուեւ Ermeni bestekarlar / Armenian Composers (Turkiye Müzik ve Sanat). Preface by Bülent Aksøy: "Three aspects of the Ottoman Music: The Sultan, Women and Non-Muslim Musicians". Istanbul, Sony, 2001. P. 20.

լայնորեն կիրառվող մենգուրալ նոտագրությանը³⁸, ապա քրիստոնյա Արևելքն այդ առումով մնում էր միջնադարյան երաժշտատեսական ավանդույթների ներքո: Սակայն ճգնաժամն այստեղ էլ էր իրեն զգացնել տալիս: Աստիճանաբար նվազում էր նեմային նոտագրությամբ երգողների թիվը: Օսմանյան դարավոր տիրապետության և խալամական շրջապատում գոյատևող քրիստոնյա ազգերի համար հետզիեւտե ավելի դժվար էր դառնում անաղարտ պահել սեփական ազգային մշակութային, մասնավորապես, երաժշտական ժառանգությունը: Բնորոշ է, որ նոր՝ ավելի կատարյալ, հնչունի որոշակի բարձրությունը նշող գրության համակարգի ստեղծման գաղափարը թևածում էր արևելաքրիստոնեական տարրեր եկեղեցիների երաժիշտների շքրշանում: Հատկապես Կոստանդնուպոլիսում, որտեղ կողք կողքի ապրում և ստեղծագործում էին, օրինակ, հույն ուղղափառ և հայ առաքելական եկեղեցիների սպասավորները, այդ խնդիրը դառնում էր կենսական անհրաժեշտություն: Համանման գործընթացներ էին ծավալվում նաև Պոլսի հունական եկեղեցական երաժիշտների միջավայրում: Պատահական չէ, որ գրեթե միաժամանակ հայկական և հունական եկեղեցական միջավայրում երեան են գալիս նոտագրության համանման նոր համակարգեր, որոնց հորինողների նպատակը նույնն էր՝ աղավաղումներից և դարերի ընթացքում հարատեած հոգևոր երգարվեստի հինավորց ավանդույթների պահպանումն ու հնարավորինս անխաթար վիճակում այն հետագա սերունդներին փոխանցումը³⁹:

³⁸ Այդ մասին մանրամասն տե՛ս Պոսպелова Р. Западная нотация XI—XIV веков. Основные реформы. Москва, Издательский Дом “Композитор”, 2003.

³⁹ XVIII դ. երկրորդ կեսի հույն ամենահեղինակավոր եկեղեցական



Համբարձում Լիմնոցյան

երաժիշտներից մեկը՝ Պետրոս Պելոպոնիսիոսը (1735—1778), որին նաև Լամպադարիոս էին կոչում (այսինքն՝ լուսարար, ըստ Սուրբ Սոֆիայի Մեծ Եկեղեցում տարիներով վարած իր պաշտոնի), փորձել է վերափոխել, պարզեցնել ճգնաժամ ապրող ավանդական երաժշտական նշանագրության ձևը. նրա հետևորդներից արիմանդրիս Խրիզանֆոս Պրուսիսը (1770—1843) 1811—1814 թթ. ստեղծեց մի նոր, ոչ գծային նոտագրության համակարգ (տե՛ս *Angelopoulos L. Les voix de Byzance*, Paris, 2005. P. 72; *Gerlach O. Petros Peloponnesios —About Authorship in Ottoman Music and the Héritage of Byzantine Music // Porphyria — International Academic Journal of Byzantine Studies*, 25. “Byzantium and Islam”. In Memory of Alessandro Angelucci, Venezia, 2017. P. 144—183): Այս ստացավ «Նոր մեթոդ» անվանումը և, ինչպես և Լիմնոցյանի համակարգը, մեծ դեր խաղաց հոգևոր երաժշտական ժառանգության պահպանման գործում (*Angelopoulos L.*, op. cit. P. 74-75).

Բացի դրանից, նոր նոտագրության հորինողներին զբաղեցնում էր նաև հետևյալը. ստեղծել նոտագրության մի այնպիսի համակարգ, որով հնարավոր լիներ արտահայտել առհասարակ միաձայն՝ երաժշտության՝ ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ, մոդալ, ոչ տեմպերացված հնչյունակարգը՝ կեստոնից փոքր ձայնամիջոցների ելեկցումով։ Դրանց հիմքում ընկած սկզբունքները համանման են. հնչյունաբարձրային առումով դրանք մոտենում են ելքուղական մաժորամինորային տեմպերացված համակարգին, իսկ նշանների արտաքին պատկերագրությամբ ընդօրինակում միջնադարյան հիմնական խազերի և նևմաների տեսքը։ Առկա են նաև հասուլ օժանդակ նշաններ, որոնք արտահայտում են ձայնեղանակի աստիճանների ալտերացված փոփոխությունների զանազան նրբություններ։ Հենց այդ սկզբունքներն առավել համակարգված տեսքով 1813-1815 թթ. իրագործեց Համբարձում Բարա Լիմոնջյանը իր այսպես կոչված նոր հայկական նոտագրության մեջ, որն ընդունվեց մեծ ոգևորությամբ և հետագա տարիներին՝ ընդհուաց մինչև Կոմիտասի հավաքչական աշխատանքը, լայն տարածում ստացավ ազգային երաժշտական շրջանակներում⁴⁰:

⁴⁰ Այդ մասին տե՛ս նաև *Արևշատյան Ա. Գրիգոր Գապասաքայյանի երաժշտագիտական ժառանգությունը*, էջ 13-17:

ԱԶԳԱՅԻՆ ՕՐԳԱՆԵՐԸ

ՏԵՇ. 4/4 (Ը 7)

Տէս. 4. Հ. Մայութիւն ամր. ու դ. դ. գ. պատմ. պ. կ.
Ա. մեծանութիւն ամբողջ խոսքը ու ու այս այլ առաջ առաջ առաջ
Բայց. ա. պ. պատմ. ամր. պատմ. դ. պ. պ. պ. պ. պ.
Ա. մեծանութիւն ամբողջ խոսքը ու ու այս այլ այլ առաջ
Սակ. պ.
Ա. մեծանութիւն ամբողջ խոսքը ու ու այս այլ այլ առաջ
Բայց. պ.
Ա. աշխ հայ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ

Տէս. 4. Հ. Պ. պ. ը. պ. ը. ը. պ. ը. ը. պ. ը. ը. պ. ը. պ. ը. պ.
Ա. կար կենաք առաջ հայ բառե արեն Ա. կար ս բերես յօց չօր
Բայց. պ. պ. ը.
Ա. կար կենաք առաջ հայ բառե արեն Ա. կար ս բերես յօց չօր
Սակ. պ. պ. ը.
Ա. կար կենաք առաջ հայ բառե արեն Ա. կար ս բերես յօց չօր
Բայց. ը. ը.

Կոմիտասի տպագիրած առաջին տեղագրությունը

(Հայութ)

Համբարձում Լիմոնջանի նոր հայկական նոտագրությամբ
Ճայնագրված Կոմիտասի ազգային օրիներգը

Ինչպես գրում են «Հայ երաժշտության պատմություն» բուհական դասագրքի հեղինակները՝ «Լիմոնջյանին չափազանց մտահոգում էր հայ հոգևոր երաժշտությունը, որն ազգային ոճի կորստի վտանգի առաջ էր կանգնած: Տգետ և ինքնահավան տիրացուները հայ հոգևոր երաժշտությունը տոգորել էին օտարամուտ տարրերով՝ լայնորեն օգտագործում էին տաճկական երաժշտությանը բնորոշ բազմաթիվ զարդարանքներ և հունական երաժշտությունից եկող ոնքային երգեցողությունը: Այս ամենը խախտում էր հայ հոգևոր երաժշտության պարզությունը, խստությունն ու զուսպ բնույթը»⁴¹: Ինքը Լիմոնջյանն այսպես է բնութագրել ինքնակենսագրության մեջ իր նոտագրության ստեղծման շարժառիթները և նպատակը. «Սիաւասիկ այսպիսի սանձարձակ կերպով երգող դպիրներուն չափ մը դրած ըլլալու համար անհրաժեշտ յամարեցինք շարականաց եին խազերու քեկորներով կազմակերպել արդի ձայնագրութիւնը, որը կարող է ամեն ազգի ձայնը գրել, կարդալ և նուագել»⁴²: Պատահական չե, որ համբարձումյան նոտագրությունը մեծ ճանաչում ստացավ ազգային երաժշտական մասնագիտական շրջանակներում, լայնորեն կիրառվելով ոչ միայն հոգևոր, այլ նաև ժողովրդական և քաղաքային երաժշտական երգարվեստի նմուշների ձայնագրման համար: Այդ նոտագրությամբ են իրականացվել Հ. Լիմոնջյանի և նրա աշակերտների կողմից կատարած շարականների առաջին ձայնագրությունները, այնուհետև՝ դրանով է իրագործվել Եղիա Տնտեսյանի Շարակնոցի ձայնագրությունը և այլն:

⁴¹ Տե՛ս Հարությունյան Ա., Բարսամյան Ա. Հայ երաժշտության պատմություն, առաջին մաս, Երևան, 1968, էջ 67:

⁴² Ինքնակենսագրությունը գրված է 1837 թ. սեպտեմբերի 14-ին:

Շատ բարձր է գնահատել համբարձումյան նոտագրությունը Արիստակէս քահանա Հիսարյանն իր հայտնի աշխատության մեջ, մանրամասն անդրադառանալով դրան և անվանելով այն «հրաշալի գիւտ»⁴³: Այնուհետև դասագրքեր և ձեռնարկներ են ստեղծվում այդ նոտագրությանը տիրապետելու համար: Դրանցից հիշատակելի են, օրինակ, Եղիա Տնտեսյանի «Տարեք երաժշտական»-ը⁴⁴, Նիկողայոս Թաշճյանի⁴⁵ և Արշակ Բրուտյանցի⁴⁶ դասագրքերը, որոնք ժամանակին, անշուշտ, ծառայել են հայ երաժիշտներին որպես համբարձումյան նոտագրությանը տիրապետելու և նրանից օգտվելու անհրաժեշտ ու օգտակար ձեռնարկներ:

XIX դարի սկզբից հայ երաժշտության զարգացումը մտնում է նոր ծիրի մեջ: Մտավորականության և հոգևորականության շրջաններում գնալով հասունանում է միջնադարյան հոգևոր երգարվեստի նմուշների պահպանման, հետագա աղավաղումներից և մոռացությունից փրկելու գաղափարը: Եվ այդ առումով 1813-1815 թթ. Հ. Լիմոնջյանի ստեղծած նոր հայկական ձայնագրությունը կարևոր քայլ էր հայ երաժշտատեսական մտքի ասպարեզում, նկատի ունենալով ուշ միջնադարի պայմաններում հոգևոր երաժշտության և խազարվեստի հետզիկետէ անկում ապրող վիճակը: Իր մեջ սինթեզելով հայ միջնադարյան խազային հիմնական նշանների արտաքին նկարագիրը և եվրոպական երաժշտական տեսպերացված համակարգից եկող սկզբունքները,

⁴³ Հիսարյեան Ա. քին. Պատմութիւն հայ ձայնագիտութեան և կենսագրութիւնք երաժիշտ ազգայնց. 1768—1909. Պ. Կոլիս, 1914, էջ 7—13:

⁴⁴ Տնտեսյան Ե. Տարեք երաժշտական, Ստամբուլ, 1933:

⁴⁵ Թաշճյան Ն. Դասագիրք եկեղեցական ձայնագրութեան հայոց, Վաղարշապատ, 1875:

⁴⁶ Բրուտյանց Ա. Դասագիրք հայկական եկեղեցական ձայնագրութեան, Վաղարշապատ, 1890:

Նոր հայկական նոտագրությունը առավելագույնս հարմարեցված էր միաձայն հոգևոր և աշխարհիկ երգարվեստի ձայնագրման, ընդ որում ոչ միայն հայկական, ինչպես հավաստել է իր նոտագրության վերաբերյալ ինքը՝ Լիմոնջյանը, այլ նաև՝ առհասարակ ընդհանուր արևելյան բոլոր մոնողիական մշակույթների համար:

Ուշագրավ և բնորոշ է Համբարձում Լիմոնջյանի կենսագրությունն ու անցած ուղին, որին բավական մանրամասն անդրադարձ կա Արիստոկրատ քին. Հիսարյանի գրքում: Հայ նոր ձայնագրության հեղինակը ծնվել է 1768թ. Բերայում, Խարբերդից Պոլիս գաղթած մի «համեստ հրովարդական ազգային»ի ընտանիքում⁴⁷: Ծնողները նրան աշակերտության են տվել դերձակի մոտ, սակայն Համբարձումը «ամենայն սիրով միտքը պահել կը ջանար, գիշեր ու ցորեկ երգելով անընդհատ՝ իւր ի բերան սրված եկեղեցական եղանակները, զորս դաս առած էր Զէննէ Պողոսէն»⁴⁸: Նկատելով Երիտասարդ Լիմոնջյանի շնորքը, Հովհաննես Չեկեպի Դյուզյանը բնակարան է տրամադրել նրան Գուրուչչմեկի ապարանքում «ուր Լիմոնձեան յոգուվ յաճախ առիթ կ'ունենար վարպետ խանէնտէներ լսելով՝ իր արուեստը հետզգետէ մշակելու և կատարելագործելու, որուն ամբողջ յոգուվ կը բաղձար ի տղայ տիոց»⁴⁹:

Ինչպես վկայում է Հիսարյանը, այդ շրջանում, երբ կաթոլիկ ազգայինները դեռ բաժանված չէին Հայ Առաքելական եկեղեցուց, Լիմոնջյանը իր ձգտումներին հագուրդ տալու նպատակով, շարունակ հաճախում էր Պոլսի գլխավոր եկեղեցիները, այնուեղ դպրություն անելով: Հետեւելով

⁴⁷Տե՛ս Հիսարյեան Ա. Պատմութիւն հայ ձայնագրութեան, էջ 7:

⁴⁸Նույն տեղում, էջ 8:

⁴⁹Նույն տեղում:

իր «պրոտեժե»-ի առաջընթացին, Հովհաննես Դյուզյան չելեպին նրան դասախոս է կարգում Մխիթարյան Լուսավորչական վարժարանում, որը գտնվում էր Ղալաթիո Ս. Գևորգ եկեղեցու մոտ: Այդ փոփոխությունը հնարավորություն տվեց Լիմոնջանին հոգալու իր օրվա կարիքները: Նրան նպաստեց նաև այն, որ նա երբեմն գրագրություն էր անում արքունի ճարտարապետ՝ ամիրա Գրիգոր Պայյանի մոտ (†1832): Համբարձումը սկսում է հաճախել նաև Ֆեների համբավոր երաժշտապետ Թաթավլացի հովյն Օնոփրիոս Փաղլտիի դասերին, ով աղքիանապոլսեցի Պողոս պատրիարքի օրոք (1763-1858) հունական ձայնագրությամբ մեղեղիներ և քրաքիմաներ էր դասավանդում Մայր եկեղեցու հարակից ուսումնարանում հայ աշակերտներին:

Չափազանց ուշագրավ է, թեև միանգամայն բնական, որ չբավարարվելով միայն Օնոֆրիոսի տված դասերով, Լիմոնջանը այցելում էր նաև թեքքե կոչված սրճարաններում նվագող «Տէու շէյխերու եւ դեվրիշներու, կատարեալ կերպով ըմբռնելու համար անոնց երգած Պէսթէներն ու նուագած Բէշրէֆիներն, որոնք առաջնորդեցին զինքը այն մեծ գործին որ պիտի անմահացներ իր անունը»⁵⁰: Միաժամանակ նա ծանոթանում է Եվրոպական ձայնագրությանը, փորձելով նրա միջոցով ձայնագրել Ներսես Շնորհալու «Քաղցրագուր Եղանակները», սակայն անդրադառնալով, որ այդ ձայնագրությունը չի կարողանում արտահայտել կես տոնից փոքր ձայնամիջոցները (մի և սի դիեզները, ինչպես գրում է Հիսարյանը), հանձն է առնում շարականների խաղերի նմանությամբ՝ հայկական նոր ձայնանիշներ հնարել: Յոթ հիմնական ձայնաստիճանների անունները դնելով փուշ, եկործ, վերնախաղ, բէնկործ, խոսրովային, ներքնա-

⁵⁰ Նույն տեղում:

խաղ, պարույկ, դրանց միայն առաջին վանկերը՝ Եվրոպական թե, մի, ֆա, սոլ, լյա, սի, դո-ի նմանությամբ, անվանեց փո, է, վե, քե, խո, նե, պա, որոնք (sic!), ինչպես նշում է Հիսարյանը, համապատասխանում են հունական բա, վու, դա, տի, քե, զօ, նի ձայնաստիճաններին: Շատ շուտով Համբարձումը դասակարգեց և որոշեց նաև տևողության նշանները, կատարելագործելով «իւր քրտնաջան աշխատութեամբ ձեռք բերած գիւտը»⁵¹:

Բարեբախտաբար, պահպանվել է Հ. Լիմոնջյանի ինքնակենսագրությունը, որը նա գրել է 1831 թ.: Ահա թե ինչպես է նա նկարագրում իր նոտագրության ստեղծումը.

«Այս երաժշտական արուեստին ձայնագրութիւնը թէեւ ես ինքս՝ Տիրացու Համբարձում հնարեցի Տիւզեանց Գուրուչէմէի բնակարանին մէջ, բայց անկատար էր: Յակոր Զելէպին լավ տեղեակ ըլլալով Երոպական երաժշտութեան, և անոր հորեղբայրը Անտոն Զելէպի քաջահմուտ Արեւելեան նուազարանաց. Ես ալ Յունական Փսալտիկային բաւական ծանոթ ըլլալով, երեքս միասին ներկա վիճակին հասցուցինք (այս գիւտը) Աստուծոյ օգնութեամբ...»⁵²:

Տայտնի է, որ Լիմոնջյանը բավական վարժ տիրապետում էր Եվրոպական գործիքներից ջութակին, իսկ արևելյան նվազարաններից՝ բամբուրին: Իր կյանքի ընթացքում մանկավարժական գործունեություն է ծավալել այդ գործիքներին նվազել սովորեցնելով, այդպես ապահովելով նաև իր ապրուստը:

Տպավորիչ է Համբարձում Լիմոնջյանի բացարիկ երաժշտական տվյալների, անկասկած, բացարձակ լսողության և հազվագյուտ երաժշտական հիշողության մասին վկայող

⁵¹ Նույն տեղում, էջ 11:

⁵² Նույն տեղում, էջ 56:

մի ուշագրավ իրական պատմություն, որը հիշեցնում է (անշուշտ, ոչ բառացիորեն) 1045 թ. Կոստանդին Թ. Սոնումախոս կայսեր պալատում տեղի ունեցած Գրիգոր Մագիստրոսի և նշանավոր արաք բանաստեղծ և աստվածաբան Մանուչեի մրցումը, որի ընթացքում մրցողներից յուրաքանչյուրը պետք է հանպատրաստից հորինված բանաստեղծական մի երկու ապացուցեր իր հավատքի ուժն ու առավելությունը: Արդյունքում ստեղծվեց Մագիստրոսի հայտնի «Հազարտողեան» պոեմը, իսկ Մանուչեն իրեն պարտված ճանաչեց⁵³: Արժե այստեղ մեջբերել Լիմոնջյանին վերաբերող այդ դիպվածը.

«Կը պատմուի թէ օր մը ունկնդրելով այն ատենի նշանաւոր երաժիշտներէն՝ Իսիաք Ճրէին (որ մեծ շնորհ գտած էր Սուլթան Մահմուտ Բ. կայսեր առջեւ) նոր հեղինակած Պէյարի Բէշրէկը, փափազեցաւ ձայնագրել զայն, և այդ դիտաւորութեամբ ուղղակի հեղինակին դիմեց՝ աղաշելով որ հաճի արվեցնել իրեն: Իսիաք որ բնաւ գաղափար չուներ ձայնագրութեան վրայ, արհամարական ձեւով մը պատասխանեց թէ՝ իրենց համար շատ դժվար է քիչ ժամանակի մէջ ըմբռնել բէշրէֆ մը, իւր հինգ երկար «խանէ»ներով և Ազըր ու Եփրիիք Սէմայիներով: Համբարձում լուութեամբ մարսեց սոյն նախատինքը, միտքը դնելով սակայն առաջին առթիւ լուծել իր վրեժը, ուստի նախ հետամուտ եղավ Ճրէա երաժիշտին ծանոթներէն մեկը ձեռք ձգել: Քիչ ատենէն կը ներկայանայ այս բարեպատեհ առիթը, և Համբարձում ուզելով օգուտ քաղել ատկէ՝ կը դիմէ ժամանակակից Ամիրա-

⁵³ Այդ իրադարձության մասին մանրամասն տե՛ս Արևշատյան Ա. Գրիգոր Մագիստրոս՝ շարականագիր և գեղագետ, Եր., Գիտություն, 2014, էջ 22—25; տե՛ս նաև՝ Արևատյան Ա. Գրիգոր Մագիստրոս — հիմնոգրաֆ և էստետիկ, Ե.: Գյուտյոն, 2018. С. 25—27.

ներէն մէկուն, որ քանից հիւրընկալած էր արդէն իր տան մէջ խանէնդէ Իսհաքը: Համբարձում կը միաբանի Ամիրային հետ՝ անակնկալ մ’ընելու համար Հրէային, և կ’որոշէն խնձոյքի մը հրաւիրել զայն: Որոշեալ օրը կ’այցելէ Իսհաք և առանց կասկածելու Լիմոնճեանի ներկայութենէն՝ որ գաղթնի տեղ մը պահուած էր, կը սկսի նուագել Պէյարի Բէշրէֆը և քանից կրկնել Ամիրային խնդրանօր. այդ միջոցին մեր երաժիշտը արդէն լրացուցած էր իր գործը՝ ամբողջովին ձայնագրած ըլլալով վերոհիշեալ Բէշրէֆը իւր կրկին Սէմայիներով: Ամիրան բան մը պատրուակելով դուրս կ’ելլէ սրահ մը և տեղեկանալով որ Համբարձում յաջողակութեամբ գործը աւարտած է, կրկին ներս մտնելով կը հարցնէ Իսհաքին՝ թէ արդեօք մէկու մը դաս տուա՞ծ է այդ Բէշրէֆը:

Եւ ո՛չ մէկուն, կը պատասխանէ Հրէան:

- Սակայն հոս մեկը կայ, որ կը պնդէ թէ քեզի չափ տեղեակ է քու հեղինակութեանդ:

Զայն լսելով կը ներկայացնէ Համբարձում, որ նոյն միջոցին սենեակէն ներս կը մտնէր: Զարմանահար կը մնայ Իսհաք, ճանչնալով այն անձը՝ որ արդէն դիմած էր իրեն, բայց վստահ ըլլալով որ նա չէր կարող գիտնալ իր երկասիրութիւնը, կը հրամայէ երգել զայն: Կը մարտի մեծանուն երաժիշտը, և հեգնական ծիծաղով մը կը սկսի երգել ամբողջ Բէշրէֆը՝ յար և նման իր նուագածին: Իսհաք այլևս չը կարենալով համբերել՝ այսքան չարաչար կերպով վիրատրուած տեսնելով իր արժանապատութիւնը, արդարացի զայրույթով մը անմիջապէս դուրս կը նետուի պօռալով անոր երեսին. «Գողցա ք արհեստս, Համբարձում»⁵⁴:

⁵⁴ Նույն տեղում, էջ 11-13:

Ուշագրավ է, որ Լիմոնջյանը չի բավարարվում այդ հաղթանակով և դիմում է նաև Բեշիկթաշի Թեքքեն (դերվիշների մենաստան՝ հանդիպելու և լսելու համար այն ժամանակվա հռչակավոր երաժիշտ Դեղէ Խսմայիլին, որի հեղինակած Բէսթէները, ըստ Հիսարյանի վկայության, «մեծ յարգ կը վայելեն մինչև ցայսօր»⁵⁵: Պատմությունը գրեթե կրկնվում է, այն տարբերությամբ, որ, ըստ Հիսարյանի պատմածի, այստեղ Լիմոնջյանն արժանանում է Դեղէ Խսմայիլի հետաքրքրությանը և հիացմունքի: «...իրա՞ւ է որ իրենք թէեւ նշանաւոր հեղինակութիւններ կ'ընէին Ուսուլի միջոցաւ, բայց անկարելի՛ էր անմիջական կերպով գրի առնել այդ երկասիրութիւնը, որով մեծ դժուարութեանց կը աղխէին իրենց աշակերտներուն դաս տուած ժամանակ՝ թէ՛ ձայնիւ և թէ՛ նուազարանի միջոցաւ, մինչև որ անոնք կարենային ըմբռնել աւանդուած եղանակը», - գրում է Հիսարյանը⁵⁶: Տեսնելով Լիմոնջյանի արտակարգ երաժշտական ընդունակությունները և նրա հնարած նոտագրության «գործած հրաշքները», Խսմայիլը պատվիրում է Համբարձումին ցանկացած ժամանակ գալ իր մոտ և ձայնագրել ո՛ր եղանակը կփափագի⁵⁷: Այդ երկու դեպքը պերճախոս վկայում են Լիմոնջյանի բացառիկ երաժշտական օժտվածության մասին, ինչն, անկասկած, դասելի է դարձնում նրան ոչ միայն հայ ազգային երաժշտական մշակութի երախտավորների, այլ նաև՝ օսմանական կայսրության երաժշտական մշակութում իր աներկքա խոշոր ավանդն ունեցող երաժիշտների շարքը, ինչն, ի դեպ, ընդունվում է նաև քուքը երաժշտագետների կողմից: Այդ յուրահատուկ

⁵⁵ Նույն տեղում, էջ 13:

⁵⁶ Նույն տեղում:

⁵⁷ Նույն տեղում:

համապարփակությունը, մշակույթային ունիվերսալիզմն առհասարակ չափազանց բնորոշ է XVIII-XIX դարերի Պոլսի հայ երաժիշտներին: Մի կողմից՝ հայ հոգևոր և աշխարհիկ երաժշտության կատարյալ իմացությունը, իսկ մյուս կողմից՝ հիմնավոր քաջատեղյակությունը հույն, պարսկա-արաբական և տաճկական վոկալ և գործիքային ժառանգությանն ու ժամանակի հնչող երաժշտությանը իր հոգևոր և աշխարհիկ ճյուղերով:

Հ. Լիմոնջյանը ունեցել բազմաթիվ աշակերտներ, որոնցից հատկապես նշելի են Արիստակես Հովհաննիսյանը, Հովհաննես Մյուհենտիսյանը, Թամբուրի Ալեքսանը և Նեյզան Զենոբը⁵⁸ (Լիմոնջյանի որդիները):

Որպես ստեղծագործող Լիմոնջյանը գրել է վոկալ-մոնողիկ երկեր հայ բանաստեղծների խոսքերով, նաև արևելյան ոճի բեսթեներ, այդ թվում՝ «Վարդանանց պատերազմին նվիրված «Ոհ, ի սկզբան պատերազմին» և այլն: Ուշագրավ են «Յարեաւ Քրիստոս» խոսքերով 20-ից ավելի նրա հեղինակած տաղերը՝ տարբեր ձայնեղանակներով:

Համբարձում Լիմոնջյանը վախճանվեց 1839 թ., հունիսի 29-ին և ինչպես նշել է Հիսարյանը՝ «նշանաւոր օր մը (...), յորում մեռաւ նաև Սուլթան Մահմուտ Բ. մեծազոր արքայն թուրքիոյ, որ Արեւելեան երաժշտութեան ըստ բաւականի հմուտ ըլլալով՝ քաջալերող մը եղած էր իր ժամանակի տաղանդաւոր երգիչներուն»⁵⁹: Անշուր հուլարկավորությունը կատարվեց Բերայի Ս. Հակոբի գերեզմանատանը, որի տեղում ներկայումս գտնվում է Ստամբուլի կենտրոնական Թաքսիմ հրապարակը:

⁵⁸ Նեյզան, այսինքն՝ նեյ (արևելյան սրբնաց) նվազող:

⁵⁹Տե՛ս Հիսարյան, նշվ, աշխ., էջ 39:

Այսայիսով, Հ. Լիմոնջյանի ոչգծային նոտագրությունը կատարեց իր կարևոր պատմական գործառությը, ճանապարհ հարթելով հայ մասնագիտացված երաժշտության և երաժշտատեսական մտքի հետագա զարգացման համար:

Լիմոնջյանի գործը շարունակեցին և կատարելագործեցին իր աշակերտները և առաջին հերթին Բարա Համբարձումի լավագույն աշակերտներից՝ Արիստակես Հովհաննիսյանը, ով Հովհաննես Մյուհենտիսյանի աջակցությամբ լրացրեց մանր չափերի՝ ծունկ, ծնկներ, կիսարաւ, բառարաւ, ինչպէս նաև յուրաքանչյուր եղանակի ընթացքը (տեմպը) նշելու ցուցիչները՝ ծանր, չափաւոր և յորդոր»⁶⁰: Հուշարժան են Ա. Հիսարյանի խոսքերն այդ մասին. «... իրաւամբ կրնանք ըսել որ եթէ Պապա Համբարձում Լիմոնջեան Հայ ձանագրութեան հիմնադիրն եղաւ իր կատարելագործած կանոններովն ու նորանոր գիտերովը, որոց շնորհիւ միայն կրցաւ տարածուիլ Համբարձումեան ձայնագրութիւնը՝ որ գուցէ մեռնելու դատապատուեր, եթէ իր մեծանուն վարպետին արժանաւոր յաջորդն եղող Արիստակես Յովհաննէսեան կեանք պարզեւած չըլլար անոր, իր աննկուն և անյոդողդ կամօր...»⁶¹:

Արիստակես Հովհաննիսյանը նաև մի շարք հոգլոր և աշխարհիկ ստեղծագործություններ է հեղինակել, որոնց թվում զանազան եղանակներով գրված «Ամէն հայր սուրբ»-եր և «Տէր ողորմեա»-ներ: Ինչպէս նշել է Հիսարյանը՝ «Մինչեւ այդ ատեն Ութ կանոնագլուխերը բոլորովին աղաւաղեալ կերպով կ'երգուիին. այնպէս որ ԲՃ. «Ի քեզ տէր յուսացայ» կանոնագլուխը՝ որ ըստ օրինի պետք է Հիւսէյինի

⁶⁰ Նոյն տեղում, էջ 67—68:

⁶¹ Նոյն տեղում, էջ 82:

եղանակով կարդացուի, Հիմազի ընթացքով կ'երգուէր (թէեւ հիմա ալ պակաս չեն հին գրութեան վրայ երգող յամառ կամապաշտներ, առարկելով թէ՝ հօրերնուն ատամկ լսածու տեսած են.), որով իրմէ ետքը եկող «Հրեշտակային ձայնի» Հանգստեան Շարականին բնաւ չէ՞ր համապատասխաներ: Այս աններելի պակասություններն իր մասնաւոր ուշադրութեան առարկայ ընելով Արիստակէս, բոլոր կանոնագույններն ալ իրենց բուն ձայներուն վերածեց, որոյ շնորհիւ այլեւս չե՞նք հարկադրուիր Մաստ եղանակով կարդալ Դժ. «Օրինեա անձն իմ զտէր»ը, մինչդեռ իր բուն ձայնին համեմատ պէտք է Սվահան եղանակի ընթացքով երգուի»⁶²:

Հիսարյանի համաձայն՝ «Յիշատակութեան արժանի են նաեւ Յարութեան «Տէր յերկնից»ներէն՝ «Փառարանակից», «Ահազին ձայնի», «Տեսիլ փայլակնածեւ», «Կանանց կանխելով», ինչպէս նաեւ Պարզեւատուն Շարականները՝ թափորի յատուկ ծանր եղանակներու փոխակերպելը: Իւր «զլուխ զործոց»ներէն մին համարուած է նաեւ «Խնկեսցին ի յելս արփիւյն» առաւտեան մաղթանքը, որուն ձայնագրեալ մէկ օրինակը մինչեւ ցարդ կը պահուի Մայր եկեղեցւոյ յարակից Ուստմարանին մէջ»⁶³:

Բացի դրանից Ա. Հովհաննիսյանը գրել է նաև հայերեն և տաճկերեն երգեր՝ որոնցից նշելի են՝ «Ես յարկս պերձ», «Ում ի նուեր», «Շնորհաց աղբիւր», «Ոն ար'իք հաւատով», «Կեցցէ՛ մեր քաջ, Տանն Օսմանեան» և այլն⁶⁴:

Բնականաբար, հաջորդիլ Հիսարյանը անդրադարձել է նաև Լիմոնջանի մյուս երեւլի աշակերտներին, որոնք կարևոր ներմուծում են ունեցել թե՛ հայ եկեղեցական

⁶² Նոյն տեղում, էջ 83:

⁶³ Նոյն տեղում:

⁶⁴ Նոյն տեղում:

Երաժշտության և իրենց Վարպետի նոտագրության կիրառման ու տարածման գործում, թե՛ հայ մասնագիտացված կոմպոզիտորական դպրոցի ձևավորման գործընթացում:

Այս շարքում, անկասկած, առաջինը պետք է տրվի Գաբրիել Երանյանի կամ Տիրացու Գաբրիելի անունը (1812-1862): Իր կարճատև կյանքի ընթացքում Երանյանը բազմակողմանի գործունեություն է ծավալել, որն ընդգրկում էր եկեղեցում սպասավորելը որպես սարկավագ, որտեղ իր գեղեցիկ ձայնով և երաժշտականությամբ շատերի ուշադրությունն էր գրավում, նաև բալական լավ ծանոթ լինելը եվրոպական երաժշտությանը, ինչը նրան թույլ տվեց ստեղծագործել այնպիսի դասական ժանրերում, ինչպիսիք են երգը (Lied), ռոմանսը և այլն: Հայնորեն ճանաչված են Գ. Երանյանի հեղինակած հայրենասիրական «Հայատան», «Կիլիկիա», «Արիք, Հայկազունք», «Հայ ապրինք, եղբայրք» և այլն, որոնք նոր ճաշակ և որակ էին ներմուծում հայ քաղաքային պրոֆեսիոնալ երաժշտության մեջ: Այդ երգերին հետագայում անդրադարձել է Կոմիտաս վարդապետը, որի մշակմամբ տվյալ երկերը առ այսօր հաճախ են հնչում համերգային հարթակներից ինչպես հայ, այնպես է օտարազգի երգիչ-կատարողների մեկնաբանմամբ:

Սակայն Երանյանի կյանքի զլսավոր առաքելությունը եղավ հրատարակչական գործը. 1858-ին Կ. Պոլսում իր ուսուցչի Արիստակես Հովհաննիսյանի հետ միասին եվրոպական նոտաներով սկսեց հրատարակել «Քնար արեւելեան» ամսաթերթը, որտեղ տպագրվում էին դաշնամուրի, ջութակի և այլ գործիքների համար գրված պիեսներ, հայկական, հունական, ֆրանսիական և թուրքական երգեր: Ամսաթերթի հրատարակումը, ցավոր, նյութական դժվարությունների պատճառով երկար չտևեց (ընդհանունը մեկ

տարի): Սակայն երաժշտագետը չէր հուսահատվում և 1861-ին վերսկսեց «Քնար արեւելեան»-ի տպագրությունը կիսամյա ձևաչափով: Այս անգամ նրան աջակցեց իր աշակերտներից Նիկողայոս Թաշճյանը, և հանդեսում սկսեցին տպագրվել զուտ ազգային երգեր և պարերգեր⁶⁵: Զուգահեռաբար, որպես հեղինակություն վայելող երաժշտության դասախոս, նա դասավանդում էր Պոլսի հայաշատ շրջանների տարրեր վարժարաններում և հաստատություններում, որտեղ իր հետ միասին դասախոսում էին նաև իր աշակերտները՝ Նիկողայոս Թաշճյանը, Համբարձում Շերշյանը, Եղիա Տնտեսյանը, Գարրիել Խանճյանը, Ռեթեոս Փափագյանը և ուրիշներ:

Երանյանի երրորդ երատարակչական նախաձեռնությունը եղավ 1862 թ., արդեն մեծ համբավ վայելող, օպերաների հեղինակ Տիգրան Չուխաջյանի համագործակցությամբ, որի հետ, նախազգալով դարձյալ նյութական դժվարությունների հնարավոր խանգարիչ վտանգը, կազմակերպեցին երաժշտական ընկերություն: Այդ ընկերության շուրջ համախմբվեցին Կոստանդնուպոլսի այնպիսի հայտնի մտավորականներ և զրողներ, ինչպիսիք էին Նահապետ Ռուսինյանը, Գրիգոր Օսյանը, Հակոբ Ռսկանը, Գրիգոր Աղաթոնը և ուրիշներ: Նրանց միահամուռ ջանքերով «Քնար հայկական» հանդեսը դարձավ ամսաթերթ, որտեղ տպագրվում էին Երանյանի, Չուխաջյանի և իտալացի երգահան Ֆուլինիի հեղինակած ազգային երգերը⁶⁶:

Այսպիսով, Համբարձում Լիմոնջյանը ունեցավ նաև իր արժանավոր շարունակողները, որոնցից առաջինը հենց Արիստակես Հովհաննիայանն էր, ով ոչ միայն ավարտին

⁶⁵ Նույն տեղում, էջ 85:

⁶⁶ Նույն տեղում, էջ 86:

հասցրեց կապես լրացնելով իր ուսուցչի նորագյուտ նույազրության համակարգը, այլ նաև թողեց ստեղծագործական ժառանգություն՝ ինչպես հոգևոր, այնպես քաղաքային հայրենասիրական երգերի ժանրերում։ Այդ գործերը բեն ներկայումս չեն հնչում, սակայն ժամանակին եղել են սիրված և տարածված։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԹԱՇՃԱԾԱԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԱԺԵՏԱԾԻՍԱԿԱՆ ՄԱՏՅԱՆՆԵՐԻ ԶԱՅՆԱԳՐՈՒՄԸ

1871 թվականին Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսը Էջմիածին հրավիրեց հոգևոր երաժշտության հայտնի գիտակ և ձայնագետ Նիկողայոս Թաշճյանին, տեղի ավանդական հոգևոր եղանակները գրանցելու համար։ Նպատակը հստակ էր՝ աղավաղումնքից փրկել, վավերացնել ավանդականը, միակ երպության բերել բազմատեսակ հնչող ժառանգությունը, հաստատելով Էջմիածնական ավանդությի իսկությունը։ Նախանցյալ դարի 60-70-ական թվականներին իրար հետեւից Թաշճյանի աշխատասիրությամբ լույս տեսած Պատարագի⁶⁷, Շարակնոցի⁶⁸ և Ժամագրքի⁶⁹ երգասացությունները այն ժամանակվա չափանիշներով, կարելի է ասել, առաջին գիտական հրապարակումներն էին, որոնք կարենոր դեր խաղացին հայ հոգևոր երաժշտության պահպանման և ուսումնասիրության գործում։

Նիկողայոս (Նիկողոս) Թաշճյանը (1841—1885) Պոլսի հայկական երաժշտական մասնագիտացված միջավայրի երեսելի ներկայացուցիչներից էր՝ կոմպոզիտոր, երաժշտագետ, մանկավարժ։

⁶⁷ Տե՛ս Զայնագրեալք երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի, Վաղարշապատ, 1874, 1878։

⁶⁸ Տե՛ս Զայնագրեալք Շարական հոգևոր երգոց, Վաղարշապատ, 1875։

⁶⁹ Տե՛ս Երգք ձայնագրեալք ի ժամագրոց Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1877։



Նիկողայոս Թաշճյան

Ծնվել է Կոստանդնուպոլիսում: Նախնական կրթությունը ստացել է Խասզյուղի Ներսիսյան դպրոցում, աշակերտելով Գաբրիել Երանյանին: Ավարտելով երաժշտական կրթությունը, նվիրվել է ուսուցչական աշխատանքի, որպես երաժշտության ուսուցիչ պաշտոնավարել է հայկական դպրոցներում, դասավանդելով նաև հայկական նոտագրություն: 1861 թվականին Գ. Երանյանի հետ՝ երատարակել է «Քնար հայկական» երաժշտական պարբերականը, իսկ եղբոր՝ Հակոբ Թաշճյանի հետ երատարակել է «Նուազ օսմանեան» կիսամյա հանդեսը: 1863 թվականին Վարդան Փապազյանի և Տիգրան Շուխաջյանի հետ շարունակել է երատարակել «Քնար հայկական», «Նուազ օսմանեան» և «Օսմանեան երաժշտութիւն» հանդեսները, որոնք տպագրվել են վիմատիպ, ընդգրկելով հայկական և բուրքական երգեր: «Օսմանեան երաժշտութիւն» հանդեսում տպագրվել են

Տիգրան Չուխաջյանի մի քանի գործերը: Ն. Թաշճյանը եռանդուն մանկավարժական գործունեություն է ծավալել Ալյուտարի Մեզպուրյան և Սամարիայի Արամյան վարժարաններում: 1871 թվականին Գևորգ Դ կաթողիկոսը հրավիրեց վաստակաշատ ձայնագրագետին Էջմիածին, Գևորգյան ճեմարանում երգ-երաժշտություն և հայկական նոտագրություն դասավանդելու: 1874 թ. Էջմիածնի Ժառանգավորաց դպրոցում դասավանդման տարիներին Թաշճյանը պատրաստել է երաժիշտների մի խումբ, որոնք նոր հայկական նոտագրություն և դրանով գրանցված երաժշտությունը տարածել են տարբեր վայրերում: 1879-ից Ն. Թաշճյանը դարձել է Մայր Եկեղեցու դպրապետը:

1874 թվականին Էջմիածնում Թաշճյանը հրատարակեց իր «Դասագիրք Եկեղեցական ձայնագրության նոտագրության հայոց» ձեռնարկը: Այդ ձեռնարկում հեղինակը շարադրել է Հ. Լիմոնջյանի նոտագրության սկզբունքները, ամփոփել նաև հայ երաժշտության հին տեսության հիմնական դրույթները, բացահայտել Եկեղեցական ձայնեղանակների համակարգի որոշիչ հատկանիշները: Նա կազմեց հիմնական ձայնեղանակների (չորս բուն և չորս կողմ), դարձվածքների, ինչպես նաև երեք լրացուցիչ ստեղիների ձայնաշարերի ցանկը: Յուրաքանչյուր ձայնեղանակում նա առանձնացրեց «Վերջավորող ձայնը», այսինքն, շարականների տների ավարտական հնչյունը՝ «դիմող ձայնը», - եղանակի երկրորդ հենակետը, որը քանակական առումով գերիշխում է տվյալ ձայնեղանակի մեղեղիներում, կիսահանգածեկի հնչյունը՝ «հանգչող ձայնը», որն ավարտում է շարականների առանձին տողերը կամ կիսատողերը և գործույթային առումով մյուս նշանակալի ձայնաստիճանները: Ելնելով դասագրքի բովանդակությունից և կառուցվածքից

կարելի է եզրակացնել, թե որքան խորը և հիմնովին է տիրապետել Թաշճյանը հայ ավանդական ձայնեղանակների միակցությանը, արդարացիորեն արժանանալով «ձայնագետ» անվանը:

Սակայն կաթողիկոսի հրավերի հիմնական նպատակը ուղղված էր հայ հոգևոր երգարվեստի դարավոր հարուստ ժառանգությունը հնարավորինս անկորուստ պահպանելու, ձայնագրելու և հրատարակելու գործին: Այդպէս, Վաղարշապատում 1870-ական թվականներին իրար հետեւից լույս տեսան հայ երաժշտածիսական հիմնական մատյանները՝ իրենց ողջ երաժշտական բաղադրիչով հանդերձ: Հիրավի կոթողային աշխատությունների մի շարք, որոնց թվում էին «Զայնագրեալք երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի», (1874, 1878), մեծադիր «Զայնագրեալ Շարական հոգեւոր երգոց»-ը (1875), որն ընդգրկում էր 1812 միավոր՝ չհաշված մեղեղային տարբերակները: Վերջապես, դա «Երգք ձայնագրեալք ի Ժամագրոց Հայատանեայց Ս. Եկեղեցւոյ» ժողովածուն էր (1877): Այդ լրջագույն գործի նախապատրաստմանը Թաշճյանին աջակցել է Պողոս Ճեպեճյանը և տակավին երիտասարդ Մակար Եկմայյանը, որը գուգահեռաբար աշակերտել է նրան:

Շարականների ձայնագրման աշխատանքներին իբրև ինֆորմանտներ մասնակցել են ավանդույթի բանիմաց կրողները՝ առաջին հերթին հենց ինքը՝ Գևորգ Դ կաթողիկոսը, այնուհետև Սահակ Վրդ. Ամատունին, Վահրամ Վրդ. Մանկունին և ուրիշներ: Այսինքն, Զայնագրեալ Շարականի լույս ընծայումը, այն ժամանակվա չափանիշներով, հայ իրականության մեջ երաժշտածիսական մատյանի մի անսահմանապ գիտական հրատարակություն է եղել, որն իրագործվել է այն ժամանակվա համար առաջարկմ Հ. Լի-

մոնշյանի այսպես կոչված հայկական նոր նոտագրությամբ, ինչը հսկայական դերակատարում է ունեցել հայ ավանդական երաժշտության՝ թե՛ հոգեւոր և թե՛ ժողովրդական ժառանգության պահպանման և վավերացման գործում:

Վերոհիշյալ երաժշտածիսական, երգչական ժողովածուները, մասնավորապես, Շարակնոցը օժտված է առաջարանով և ըստ այբենական կարգի և ձայնեղանակների դասավորված ցանկերի, ինչը նույնպես նորություն էր եկեղեցական գրքերի այն ժամանակվա տպագրության ոլորտում: Շարակնոցում ողջ եկեղեցական տարվա տոնացույցին համապատասխանող օրիներգերը ուղեկցվում են շարժման՝ տեմպի և ձայների՝ այսինքն, ձայնեղանակների ցուցիչներով: Իսկ ժողովածուի բուն երաժշտական նյութը բացվում է սկսվածքների շարադրումով: Ինչպես հայտնի է, սկսվածքները հնուց ի վեր եկեղեցական երգեցողության մեջ ձևավորված և ըստ ութ ձայնեղանակների երգվող մի փոքրածավալ հավաքածու է, որը դարեր շարունակ երգեցողներին ծառայել է իբրև ամենօրյա երգչական վարժանքի նյութ՝ ձայնեղանակների բոլոր նրբությունների մեջ հմտանալու, դրանք յուրացնելու նպատակով:

Շարակնոց մատյանի վերջում զետեղված է մի ուշագրավ ցանկ, որն, ըստ ամենայնի, քաղված է միջնադարյան աղբյուրներից: Այն վերնագրված է. «Ժամանակագրութիւնք սրբոց Կարդապետաց՝ հեղինակաց Շարականաց»: Ցուցակում բերված տվյալները թեև աներկրա չեն, սակայն արժանի են ուշադրության: Ստորև մեջբերում ենք այդ ցանկն ամբողջությամբ.

«Ժամանակագրութիւնք սրբոց Վարդապետաց՝ հեղինակաց Շարականաց:

- Սուրբն Իսահակ - 426
Սուրբն Մեսրով - 426
Սուրբն Մովսէս Խորենացի - 441
Ստեփաննոս Սիւնեցի Ա - 441
Սուրբն Յովհանն Մանղակունի - 480
Տէր Կոմիտաս - 618
Անանիա Շիրակացի - 661
Սուրբն Իսահակ Զորափորեցի - 703
Սուրբն Յոհան Օձնեցի - 720
Ստեփաննոս Սիւնեցի Բ - 728
Տէր Պետրոս Գետարարձ - 1019
Գրիգոր Մագիստրոս - 1044
Յովհաննէս Սարկաւազ Իմաստասէր - 1117
Գրիգոր Վկայասէր Եղբայր Շնորհալւոյ - 1113
Սուրբն Ներսէս Շնորհալի - 1166
Ներսէս Լամբրօնացի - 1181
Գրիգոր Ակեւոացի - 1204
Խաչատուր Վրդ. Տարօնացի - 1205
Վարդան Վրդ. Մեծն - 1251
Յակոբ Վլայեցի - 1268
Յովհաննէս վարդապետ Պլուզ - 1288
Կիրակոս վարդապետ Երզնկացի - 1478»⁷⁰:

Այս ցանկն, անկասկած, քաղվել և համեմատվել է միշնադարյան գրչագիր ընտիր Շարակնոցների նմանատիպ ցանկերի հետ, որոնցում վավերացվել են ազգային շարականներգության երախտավորների անունները և նրանց

⁷⁰Տէ՛ս Շարական, էջ 1090:

ամենահայտնի շարականների ստեղծման մոտավոր տարեթվերը:

Ինչպես գրում է Ռ. Աքայանը՝ «ապացուցված է, որ Թաշճյանի գրառած բազմաթիվ եղանակներում խազային նոտագրությունից շատ բան պահպանվել է առանց նկատելի փոփոխության: Այդ հատորներում ամփոփված է V—XV դարերի հայ պրոֆեսիոնալ մոնողիկ երաժշտության պատկառելի մի բաժին՝ ժանրերի ու ձևերի բազմազանությամբ»⁷¹: Դրանք առ այսօր կ ունեն գիտական ու գեղարվեստական մեծ արժեք, պահպանելով իրենց նշանակությունը Հայ (և ոչ միայն հայ) Առաքելական եկեղեցու պաշտոներգության մեջ:

Ուշագրավ է, որ երաժշտածխական մատյանների հրատարակումը սկսվեց Պատարագի երգասացություններից, հավանաբար, նկատի ունենալով Պատարագի առանցքային նշանակությունը Հայ եկեղեցու պաշտոներգության մեջ: Բնորոշ է նաև, որ Պատարագի երգասացությունները ի տարբերություն մյուս ժողովածուների լույս տեսան երկու անգամ՝ 1874 և 1878 թվականներին: Հրատարակության մեջ ամենայն մանրամասնությամբ արձանագրված են Պատարագի բոլոր մասերը, առանձին բաժիններով ներկայացված են կիրակի օրերի⁷², լուր օրերի⁷³, տաղավար տոնների⁷⁴, մեծ պահքի⁷⁵ համար նախատեված երգասացությունները, ինչ-

⁷¹Տե՛ս Հայ երաժշտության հանրագիտարան, Եր., 2019, էջ 239:

⁷²Երգեցողությունը Սրբոյ Պատարագի, էջ 9—50:

⁷³Նոյն տեղում, էջ 51—74:

⁷⁴Նոյն տեղում, էջ 75—94:

⁷⁵Նոյն տեղում, էջ 173—191:

պես նաև՝ Պատարագի սրբաւցությունները իրենց «ծանր» և «յոյժ ծանր» տարբերակներով⁷⁶ և այլն:



Ն. Թաշճյանի ձայնագրած Պատարագի տիտղոսաթերթը

Նշելի է նաև Պատարագի հավելվածը, որն ընդգրկում է տերունական տոներին պատշաճող տաղերն ու մեղեղիները⁷⁷: Մեր կարծիքով, դրանց թվում տեղ են գտել Բարձր Սիօնաղարի շրջանում, մասնավորապես, Կիլիկյան Հայաստանում ստեղծված մեղեղիական առումով չափազանց զարգացած և բարդ նկարագիր ունեցող մի քանի նմուշներ, որոնցից են, օրինակ, Գրիգոր Նարեկացու «Աչքն ծով ի ծով» (Աստծածանի և Ծննդյան), «Դիտելով զիերանոս» «Հաւուն, հաւուն» տաղի փոխը (Հարության ԲՃ), «Ի

⁷⁶ Նույն տեղում, էջ 146—156:

⁷⁷ Նույն տեղում, էջ 156—171, 95—114:

կոյս վիմէն» (Հարության ԳՃ), «Միաշաբաթ օր հանգստեան» (Զատոկի և Հինանց), «Ի հանդէս տօնի» (Հայրապետաց) և այլ մեղեղիներ: Այս մեղեղիներում, որոնց ձայնեղանակային նկարագիրը հաճախ դուրս է գալիս եկեղեցական Ութձայնի կանոններից, դրսերբվել են մեկ կողմից, բուն հոգևոր մոնողիայի ներսում առկա զարգացման միտումները, մյուս կողմից՝ այստեղ կարելի է նշմարել նաև աշխարհիկ երգարվեստին բնորոշ գծերի ներթափանցումը: Մի երևույթ, որը նկատելի է արդեն Գրիգոր Նարեկացու տաղերում: Հատկանշական է, որ հավելվածում զետեղված մեղեղիները մեծ մասամբ օժոված են մեկ կամ երկու պահված ձայներով (ձայնառությամբ): Դրանցից են «Այսօր ցընծայ լեառըն Թափօր» (Աստվածածնի. Ծանր. ձայնառ. «սոլ» և «մի»), «Խնկին ծառին նըման ես» (Ավետյաց. Չափավոր. ձայնառ. «ֆա» և «դո»), «Աւետիս քեզ Մարիամ» (Խաչի. Ծանր. ձայնառ. «սոլ» և «մի»), «Աստուածածին կոյսըն Մարիամ կայր առ խաչին իւրոյ միածնին» (Խաչի. Ծանր), «Տիրամայրըն հանդէպ խաչին» (Խաչի. Ծանր. ձայնառ. «սոլ») և այլն: Զայնառության առկայությունը որպես բազմաձայնության նախնական, սաղմնային տեսակ վկայում է, որ վերռնշյալ ծորերգային-մելիզմատիկ երգասացությունները նշանափրում էին XII—XIV դդ. հայ մոնողիկ մասնագիտացված երգարվեստի բարձրակետային սահմանը, որից հետո տրամաբանական հաջորդ քայլը պետք է լիներ բազմաձայնության մուտքը հայ ազգային մասնագիտացված երաժշտության մեջ, ինչպես դա տեղի ունեցավ Եվրոպական երաժշտության մեջ՝ սկզբնավորվելով տակավին X—XI դարերում:

Ժամագիրքը (1877) իր մեջ էր ամփոփում ոչ պակաս կարևոր ամենօրյա ժամերգությունների երգեցողությունը: Այստեղ առանձին բաժնով ներկայացված են Ներսես Շնոր-

հալու հեղինակած Գիշերային ժամի և Արևագալի երգերը, հար և նման մեր միջնադարի ձեռագիր ժամագրքերի: Այդ երգերը, բնականաբար, տարբերվում են իրենց մեղեղիական նկարագրով ժամագրքի երաժշտական բաղադրիչը կազմող մնացած երգասացություններից, ինչպիսիք են, սաղմուները, երգեցիկ քարոզները, կանոնագլուխները և այլն, աչքի ընկնելով մեղեղիական արտահայտչականությամբ, որը մոտ է ժողովրդական մելոսին:

1880-ականներին Ն. Թաշճյանը, ավարտելով թերևս իր կյանքի կարևորագույն գործը, վերադարձավ Կոստանդնուպոլիս, շարունակելով իր սիրած ուսուցչությունը: Նա հայտնի է եղել նաև որպես հրապարակախոս: 1864 թվականին «Ժամանակ» պարբերականում տպագրվել են նրա մի շարք հոդվածները: 1879 թվականից մինչև կյանքի վերջը Թաշճյանը եղել է Պոլսի Գում Գապուի հայկական Ս. Աստվածածին մայր եկեղեցու երաժշտապետը:

Նիկողայոս Թաշճյանը կնքել է իր մահկանացուն 1885 թվականին Վ. Պոլսում:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԵՂԻԱՏԱՏԵՍՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԵՐԱԺՇՏԱՏԵՍԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Կոստանդնուպոլսում է անցել XIX դարի հայ նշանավոր երաժիշտ-տեսաբան, մանկավարձ և տպագրիչ Եղիա Տնտեսյանի (1834—1881) ստեղծագործական գործունեությունը: Թեև կյանքի ցավալիորեն կարծ տևողությանը (ընդհամենը 47 տարի), Տնտեսյանը ապրեց չափազանց հագեցած և բեղմնավոր մի կյանք: Նրա թողած ժառանգությունը չի կորցրել իր գիտական նշանակությունն առ այսօր:

Ե. Տնտեսյանը ծնվել է Կ. Պոլսում, սովորել՝ Միջազգուղ թաղամասի դպրոցում: 1848 թ. դարձել է «Սրապեան» տպարանի աշակերտ: Հետագայում Հովհաննես Մյուհենտեսյանի դեկավարությամբ, մասնագիտացել է նաև հայկական և եվրոպական նոտատպության ասպարեզում: 1862-ից որպես ուսուցիչ աշխատել է Հաճնում, դասախոսություններով հանդես եկել «Քնար հայկական» ընկերության միջոցառումներին: Որոշ ժամանակ անց հիմնել է տպարան և երատարակել մի շարք գրքեր, որոնց թվում նաև Հակոբ Պարոնյանի ստեղծագործությունները: Ապա մեկնել է Երուսաղեմ, այնուհետև Էջմիածին՝ երգվող շարականները տեղում ուսումնասիրելու նպատակով, ծանրթացել է նաև խազագիր ձեռագրերին: Վայելչակազմ և գեղեցկադեմ Տնտեսյանը վայելում էր աշակերտների և գործընկերների սերն ու հարգանքը: Մեծ էր նրա հեղինակությունը նաև եկեղեցական երաժիշտների և հոգևորականների շրջանում:



Եղիա Տնտեսյան

1860-ականներին սկսվել է նրա հետազոտական գործունեությունը: Արդեն 1864-ին Կ.Պոլսում հրատարակվեց Տնտեսյանի «Բովանդակութիւն նուազաց Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ» աշխատությունը, որտեղ ելքոպացի հայտնի գիտնականներ՝ Յ. Շրյոդերի, Գ. Վիյուսովի և Հ. Պետերմանի հրապարակումներից հետո առաջին անգամ ամենայն մանրամասնությամբ ներկայացվել են շարականների սկավաճքները (ձայնակարգերի ոլթմախնունացիոն բանաձեռք), ինչպես նաև շարականների մի ընտրանի: Այդ ժամանակներից սկսած Ե. Տնտեսյանը ամբողջովին նվիրվել է ազգային հոգևոր երգարվեստը վերաձայնագրելու, կարգավորելու աշխատանքին, դարերի ընթացքում հարատևած միջ-

նադարյան Եկեղեցական երաժշտությունը հետագա աղավաղումներից զերծ պահելու նպատակով:

1864 թվականին Պոլսում լրւս տեսավ Եղիա Տնտեսյանի «Նկարագիր երգոց Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ եւ հաւելուած բովանդակութիւն երգոց ըստ ուրին ձայնից» աշխատությունը, որտեղ ամփոփված էին եեղինակի բազմամյա պրատումների արդյունքները շարականագիտության ոլորտում: Այդ գրքի բազմաթիվ արժեքավոր դիտարկումներն ու եղբակացություններն, այդ թվում և հայոց ավանդական ձայնեղանակների վերաբերյալ, առ այսօր չեն կորցրել իրենց գիտական նշանակությունը:

1869-71 թթ. Տնտեսյանը համբարձումյան նոտագրությամբ գրառել է Շարակնոցի երգասացությունները: Սակայն նրա ձայնագրած Շարակնոցը, որը ներկայացնում էր պատմականորեն ձևավորված Պոլսի հոգևոր երգվածքը, լրւս տեսավ միայն 1933 թ., իր որդու՝ Լևոնի ջանքերով: Նույն թվականին Լևոն Տնտեսյանը, որը փաստորեն հոր երաժշտագիտական ժառանգության կրողն ու տարածողը եղավ, լրւս ընծայեց նաև մի գլքովյ՝ «Տարերք երաժշտութեան» վերնագրով, որն, ըստ եռթյան, համբարձումյան նոտագրության Տնտեսյանի վերաբարձումն էր, պարզ ասած՝ այդ նոտագրության մի ձեռնարկ-դասագիրք:

Անկասկած, Ե. Տնտեսյանն իր ժամանակի և պոլսական երաժշտական շրջանակների ամենահեղինակավոր և նշանակալի դեմքն էր: Իր տեսական և գործնական հսկայական փորձը նա շարադրել է սակավատիվ, սակայն շատ արժեքավոր աշխատություններում: Դրա վառ ապացույցն են, օրինակ, հայկական Ութձայնի կառուցվածքին և առանձնահատկություններին վերաբերող նուրբ դիտողականությամբ աչքի ընկնող նրա դիտարկումները, որոնք նա

շարադրել է իր «Նկարագիր երգոց»-ում: Օրինակ, հայտնի է, որ ութ ձայնեղանակներից յուրաքանչյուրն ունի մեկ կամ մի քանի «դարձվածք»: Բացի դրանից, Շարակնոցի երգասացություններում իրականում առկա են ստեղիների ավելի շատ տեսակներ ու սեռեր, քան եկեղեցու կողմից կանոնակարգված երկու ստեղի ձայնեղանակները: Այդ իրողությունը հստակորեն արտացոլված է Բարսեղ Կեսարացուն վերագրվող միջնադարյան մի մեկնության մեջ՝ «Յաղազ ձայնից» խորագրով, որի թարգմանիչն է, իսկ գուցե նաև կազմողը VIII դարի նշանավոր փիլիսոփա, քերական և շարականագիր, Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսը⁷⁸: Այդ մեկնության մեջ հընթացս հայկական Ութձայնի ձայնեղանակների աստվածաբանական, գեղագիտական և ծիսական ու գրծնական մեկնաբանությունների, նշված են բոլոր բուն և մեկ կողմ (Բկ, Ավագ կողմ) ձայնեղանակներին վերաբերող ստեղիներ, մի քան, որը երբևէ այլ մեկնություններում չի հանդիպում⁷⁹:

Ինչպես հայտնի է, հայ առաքելական եկեղեցին կանոնակարգել է ութ ձայն եւ երկու ստեղի եղանակները: Սակայն Շարակնոցի երգասացություններում բացի ութ հիմնական ձայնեղանակներից առկա են ոչ թե երկու, այլ երեք ստեղի եղանակ եւ մի շարք այսպես կոչված «դարձվածքներ»: Դա պարզորոշ երեւում է պրոֆ. Ռ. Աթայանի գրքում բերված ձայնեղանակների տախտակից⁸⁰: Այդ երեւույթը

⁷⁸ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս *Arewšatyan A.* Deux texts arméniens attribués à Basile de Césarée sur l'Interprétation des modes musicaux // REArm (Paris), t. 26, 1996—1997. P. 339—355.

⁷⁹ Տե՛ս *Արեշտյան Ա.* Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ, Ե., 2003, էջ 116:

⁸⁰ Տե՛ս *Աթայան Ռ.* Հայկական խազային նոտագրություն, էջ 162-163, տե՛ս նաև մեր Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ, էջ 22-23;

նկատել է դեռևս Եղիա Տնտեսյանը եւ անդրադարձել դրան իր «Նկարագիր Երգոց»-ում, նշելով ստեղիների չորս հիմնական տեսակ և մի քանի միջանկյալ, խառը և հատուկ ձևեր⁸¹: Սակայն հազիվ թե Տնտեսեանին ծանոթ լինեին այդ միջնադարյան մեկնությունները, որոնք պետք է հաստատեին իր եմպիրիկ փորձը գրավոր վկայությամբ: Իրականում նա իրեն ավանդված և դեռևս իր ժամանակ շրջանառվող ազգային լսողական փորձի ժառանգորդն էր և երաժշտության գործնականից ելնող հետազոտող:

Ուշագրավ է, որ Տնտեսյանի հիմնական գիտական հետաքրքրությունների շարքում մշտապես եղել է նաև խազերի վերծանության խնդիրը: Ամենայն հավանականությամբ, նա ի մոտո ծանոթ էր Գր. Գապասարյանի տեսական աշխատություններին, որոնցում կենտրոնական տեղ են գրավել հայ միջնադարյան խազանշանները և դրանց բացատրությունն ու համեմատությունը բյուզանդական նևումաների և ընդհանուր արևելյան երաժշտական նշանագրության համակարգերի հետ⁸²: Ինչպես արդարացիո-

Զայնելրանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում, Ե., Գիտություն, 2013, էջ 26-27; *Arevshatyan A.* Учение о гласах в средневековой Армении. Е.: Гитутюн, 2020. С. 26—27.

⁸¹ Տե՛ս *Տնտեսեան Ե.Մ. Նկարագիր Երգոց...*, էջ 70:

⁸² Գր. Գապասարյանի երաժշտատեսական ժառանգության մասին տե՛ս *Արայան Ռ.Ա. Գրիգոր Գապասարյանը և խազարանությունը, ԲՈ, հ. 5, Ե., 1960, էջ 165—176; Թահիմյան Ն.Կ. Գրիգոր Գապասարյանի «Համառոտութիւն երաժշտական գիտութեան» անտիպաշխատությունը, ԲՈ, հ. 11, Ե., 1973, էջ 291—334; Արևշատյան Ա. Գրիգոր Գապասարյանի երաժշտագիտական ժառանգությունը, Ե., Գիտություն, 2013; *Arewschatyan A.* Das Buch Acht-Echoi-System von Grigor Gapasakalyan als Zusammenfassung des Musiktheoretischen Gedankenguts des Mittelalterlichen Armenien // Theorie und Geschichte der Monodie. Bericht der Internationalen Tagung. Martin Czernin und Maria*

րեն նշել է Ռ. Աթայանը՝ «այդ ժամանակաշրջանի հայ երաժիշտներից միայն Եղիա Տնտեսյանն էր, որ խազերի ուսումնասիրությունը դրեց լուրջ հիմքի վրա և այդ գործին տվեց հետազոտական բնույթ»⁸³: Ինչպես հայտնի է, Տնտեսյանը ուսումնասիրել է տարբեր հավաքածուներում գտնվող խազագրված ձեռագրեր և հնատիպ մատյաններ, մեկնել է Էջմիածին, շրջել Հայաստանի տարբեր վայրերում, ծանոթանալով տեղական երգվածքներին: Նա կատարել է մանրակրկիտ հետազոտություն և համեմատություն, հասնելով շոշափելի արդյունքի⁸⁴: Աթայանը գնահատել է նրան որպես մինչկոմիտասյան շրջանի հայ երաժշտագիտության կարևորագույն դեմքը, հատկապես նկատի ունենալով Տնտեսյանի Շարակնոցի ձայնագրությունը և «Նկարագիր երգոց Հայաստանեայցս ս. եկեղեցւյ» գիրքը⁸⁵:

Տնտեսյանը, ըստ երևույթին, բավական լավ էր կողմնորոշվում խազերի, և նրանցով արված շարականների ձայնագրությունների մեջ: Դրա մասին են վկայում «Նկարագիր երգոց»-ում բողած դիտարկումները, օրինակ. «... երգերու տեսակները և սեռերը իրենց խազերու կարգերէն կ'որոշուին. և թէ՝ հին խազերը, որոց օրենքները լիովին ծանր չըլլալովն հանդերձ, ոչ միայն անօգուտ չեն, այլև բավական


Pischlöger, Wien 2012, band 7/1. Brno, 2014. S. 37—47; Григор Гапасакагян. Книга о музыке, где содержатся краткие вопросы и ответы на армянском, греческом и персидском языках. перевод с грабара и введение А.С. Аревшатяна. Примечания А.С. Аревшатяна и Л.О.Акопяна. Е.: Гитутюн, 2017.

⁸³ Տե՛ս Աթայան Ռ.Ա. Հայկական խազային նոտագրություն, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1959, էջ 126:

⁸⁴ Նույն տեղում:

⁸⁵ Հայ երաժշտության հանրագիտարան, Ե., Հայկական հանրագիտարան հրատ., 2019, էջ 667:

առաջնորդութիւն մը կ'ընեն երգելու ատեն, թէ՝ իրենց հնարման ժամանակին նկատմամբ բաւական կանոնաւոր են եղեր, և թէ՝ պետք է որ փոյթ ունենամք ասոնց դիրքը քննել, իմանալ և օգուտ քաղել՝ ի բարեկարգութիւն եկեղեցական երգոց և ի գիւտ նախնեաց երաժշտական ձեւերուն»⁸⁶:



Ե. Տնտեսանի «Նկարագիր երգոց»-ի տիտղոսաթերթը

Ե. Տնտեսանի «Նկարագիր երգոց»-ում առկա է չափազանց ուշագրավ մի ծանոթագրություն. «... դէպ եղեւ մեզ տեսնել այսպիսի հին Ժամագրքեր, որք Խազգիրը կոչուած են: (...) Ժամագրքին երաժշտական մասն է սայ, որոյ մէջ Մեսեղիները և Ուղիղեղիցիները երաժշտական խազերով նշանակուած են և որոց մէջ կան Հարցփառեր և ուրիշ եր-

⁸⁶ Նկարագիր երգոց..., էջ 79,71:

գեր, որը անգործածելի են այսօր: Այս երգերուն շարքին թղթի լուսանցքներուն վերայ բառեր դրոշմուած է իբր այլ և այլ եղանակաց ձևերու անուններ, ինչպէս, Անձեղն, Չազն, Գուսնակ, Չափրիկ և այն, որոյ մէկ հետքը կայ Շարակնոցաց մէջ, թէև տարբեր անուններով, ինչպէս Աւագ կողմ, Վառ ձայն և այլն»⁸⁷: Մեկ այլ տեղում կարելի է կարդալ Տնտեսյանի հետաքրքրական մի անդրադարձը խազերի տառային նշումների վերաբերյալ, որոնք, ըստ հեղինակի արդարացի գնահատականի, ոչ այլ ինչ են, եթե ոչ ձայնի ուժգնության աստիճանը և երգասացության կատարման տեմպը նշող ցուցումներ, համարժեք եվրոպական դասական երաժշտության Forte, Piano, Dolce, Lento, Grave, Diminuendo, Crescendo, Ritardando, Rallentando, Staccato և այլ նշումների: Հնարավոր է անգամ հայկական միջնադարյան նշումների, որ գրչագրերում բերված են և՝ կրծատ, և՝ լրիկ գրությամբ, ինչպէս և վերը նշված իտալերեն տերմինների մի համեմատական առյուսակ կազմել⁸⁸:

Սակայն մինչ այդ մեջքերեմ Տնտեսյանի կարծիքն այդ մասին. «Ա. Երուսաղեմի վանուց թանգարանը եղած գրչագիր մատեանի մը մէջ մեր կարծեաց համեմատ բացարուած կգտնենք զանոնք, ինչպէս. բ. բարձր, դ. դարձ, զ. զարկ, թ. թանձր, լ. լայն, ծ. ծանր, կ. կամաց, յ. յետ ձգէ, շ. շատ, պ. պինդ, ս. սրէ, վ. վերցո, ց. ցած, թ. քաշ»⁸⁹: Այսուհետև

⁸⁷ Տնտեսեան, նշվ., աշխ., էջ 28

⁸⁸ Տե՛ս մեր կազմած հայ միջնադարյան գրչագրերում պահպանված և եվրոպական երաժշտության տերմինաբանության մէջ ընդունված եղբերի համեմատական ցանկը՝ Արևշատյան Ա. Մանրուսան խազերի մեկնաբանման և կատարման հարցի շուրջ (ըստ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի մատենադարանի մի Մանրուսամունքի). Երաժշտական Հայաստան, N 1 (12), էջ 24:

⁸⁹ Տնտեսեան, Նկարագիր երգոց..., էջ 48:

նա շարունակում է. « ... նոյն գրչագիր մատեանի մէջ կայր նաեւ լատինական երաժշտական խազերու վերայ համառուս աղիւսակ մը... »⁹⁰: Յավոք, առ այսօր չի հաջողվել նոյնացնել, թե Երուսաղեմի հայոց թանգարանի կամ ներկայիս մատենադարանի որ գրչագիր Ժամագրքի մասին է խոսքը, քանի որ Ե. Տնտեսյանը որևէ այլ տվյալ խնդրու առարկա Ժամագրքի մասին չի հաղորդել: Ենթադրելի է միայն, ինազերի զետեղված տախտակից ելնելով, որ դա կիլիկյան շրջանի մի Ժամագրք-Մանրուսմունք է, որտեղ գրառված են հատկապես Ներսէս Շնորհալու խազաբանական պրատումների արդյունքը հանդիսացող՝ Շարակնոցում կիրառված խազերի համեմատ ավելի բարդ և ածանցյալ նկարագրի՝ թվով 23 մանրուսման խազերը: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ խոսքն ամբողջական կամ թերի Մանրուսման գրքի մասին է, որը պարունակում է մանրուսման արվեստի գործնականին առնչվող բավական շահեկան տվյալներ: Տնտեսյանի գրքում մեջքերված ձեռագրական հատվածն ընդգրկում է և Մանրուսման եղանակների ցանկը, և՝ դինամիկ ու տեմպային նշանների ցուցակը, և՝ մանրակերտ-զարդուրուն երգեցողության գուտ գործնական երգչական ձայնավարժությանը, ձայնարտաքերմանը վերաբերող մի բաժին: Այսինքն, տվյալ ձեռագիրը կալոֆոնիկ երգեցողական արվեստին նվիրված ձեռնարկի մի տիպական նմուշ է: Այդ պատառիկը, որը գրավել է Տնտեսյանի սեեռուն ուշադրությունը, պերճախոս վկայությունն է այն իրողության, թե որքան զարգացած են եղել հոգևոր երգարվեստի տեսությունն ու գործնական ուսուցումը Բարձր Միջնադարի Հայաստանում, հատկապես, Կիլիկյան Հայաստանում:

⁹⁰ Նոյն տեղում:

Հետաքրքրական է նաև Տնտեսյանի կարծիքն խազերի վերծանության խնդրի մասին. «... մինչդեռ, լրասաւորեալ եւրոպացիք առ ի զարգացումն գիտութեանց կը հետազոտեն մինչեւ հնութեան խորքերը, և կ'աշխատին ընթեռնուլ նաեւ հազարաւոր տարի առաջ քանդակուած արձանագրութիւնները, և մասամբ իւիք կը յաջողին, մենք դեռ ևս քանի մը հարիւր տարուան մեր երաժշտական խազերուն վերայ զորս ցարդ ի ձեռին կը գործածենք ամեն օր և ամեն ուրեք և քիչ շատ անոնց առաջնորդութեանը կարու ենք երգելու ատեն, երբեք դիտողութիւն մը ըրած չունինք և ուշադրութիւն մը չենք մատուցած: Ստուգի ցաւալի սառնութիւն և անհոգութիւն է այս: Երգերու հետախուզութեան մասին այսչափ անփոյտ ըլլալ և բանիւ բերանոյ միայն երբեմն բարեկարգութիւն բնտրել»⁹¹:

Ուշագրավ է նաև 1867 թ. «Սիոն» հանդեսում շարունակաբար տպագրված Տնտեսյանի «Ազգային երաժշտութիւն» հոդվածաշարը⁹², որտեղ նա իմիջայոց գրել է. «Քանի որ քիչ շատ ազգային դրոշմ ունեցող երաժշտութիւն մը միա յն եկեղեցոյ մէջ ունինք, և ազգին այժմեան վիճակին մէջ եկեղեցին զատ կեղրոն մ'ալ բնաւ չ'կայ, ուր հաւաքուին ամեն կարգի ժողովուրդը, և ուրտեղ միայն կարելի է կանոնաւոր երաժշտութեան մէջ տարածել ուստի մէկ կողմէն այս երաժշտութեան զարգացմանը և եկամուտ եղանակներով եղծմանէ զերծ մնալուն աշխատելու, միանգամայն սոյն եղանակաց այն մասնաւորութիւնները՝ որ երաժշտական օրինակաց դէմ չըլլալով ազգային ձեւեր են, պահելու փոյթ տարած ատեն, միւս կողմէն ալ ընտանեկան երգոց

⁹¹ Նույն տեղում, էջ 71:

⁹² Տես «Սիոն», 1867, հունիս, հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների համարները:

համար՝ առանց օտարներու կապկօրէն նմանելու, այնպիսի եղանակներ պետք է ընտրել՝ որ մեր ընդունակութեան և Եւրոպական դաշնակի ալ յարմարին»⁹³: Այս մեջբերումից կարելի է պատկերացում կազմել Ե. Տնտեսյանի ազգային երաժշտության իրեն ժամանակակից վիճակի և զարգացման տեսլականի, նաև՝ դաստիարակչական դերի շուրջ նրա արտահայտած հայացքների մասին:

Ինչպես արդեն նշվեց, Տնտեսյանի ձայնագրած Շարակնոցը ներկայացնում էր պատմականորեն ձևավորված Պոլսին հատուկ շարականների երգվածքը, որը էջմիածնականի համեմատ աչքի է ընկնում առավել երգայնացված բնույթով և մեղեղիական զարդարանքների (մելիզմների) առատությամբ⁹⁴: Հնարավոր է, որ դրանում իր դերն է խաղացել հունական հոգևոր երգեցողության որոշակի ազդեցությունը, ինչը բացատրվում է Կոստանդնուպոլսում դարեր շարունակ Հայ Առաքելական և Հույն Ուղղափառ եկեղեցիների երգեցողների կողք կողքի ապրելն ու շփվելը: Ինչ վերաբերվում է «Նկարագիր երգոց»-ին, ապա այդ աշխատությունը աչքի է ընկնում մի շարք խորաթափանց դիտարկումներով, որոնք վերաբերվում են, օրինակ, այս կամ այն շարականի կամ ամբողջական կանոնի հեղինակային պատկանելիությանը, ձայնեղանակային յուրահատկություններին, ընդհանուր ձայնեղանակային համակարգի կառուցվածքին և նրա առանձնահատկություններին, ինչպես նաև՝ Սանրուսան խազերին և այլն: Նամակների

⁹³Տե՛ս «Սին», 1867, սեպտեմբեր, էջ 146—148:

⁹⁴Ե. Տնտեսյանի ձայնագրած Շարակնոցին նվիրված մանրամասն ուսումնասիրությունը Տե՛ս *Utidjian H. Tntesean and the Music of the Armenian Hymnal. Parrésia. Review pro vychodní křesťanství.* Praha, 2011, 5. P. 47—175; *item, Tntesean and the Music of the Armenian Hymnal (Conclusion)*. *Parrésia.* Praha, 2012, 6. P. 77—127.

ձևով Տնտեսյանը ներկայացրել է նաև Նիկողոս Թաշճյանի հետ ունեցած տարածայնությունները կամ բանավեճը՝ Շարակնոցի երգասացությունների վերաբերյալ, շարադրելով կարևոր տեղեկություններ Ութձայնի դարձվածքների, երաժշտական չափերի և ոտանավորների ամանակների մասին:

Հմուտ երաժշտապետի վախճանը եղերական էր: Իր հրատարակած «Նոր երգարան հայոց» ժողովածուում (1880) Մ. Նալբանդյանի «Ազատություն» և ազատախոհական այլ բանաստեղծություններ, այդ թվում նաև՝ ֆրանսիական հանրահայտ «Մարսելյողը» տպագրելու համար Եղիա Տնտեսյանը բանտարկվեց և ապա մահացավ բանտում, այդպիսով դառնալով 1880-ական թվականներին սկիզբ առած արդուլիամիոյան բռնությունների առաջին զոհերից մեկը:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ


ԱՐԻՍՏԱԿԵՍ ՀԻՄԱՐԼՅԱՆԻ ՄԵՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Կոստանդնուպոլսի երևելի մշակութային գործիչներից էր Արիստակես քահանա Հիսարյանը: Նա ծնվել է Պոլսում, որտեղ և ստացել է իր կրթությունը: Ավագանի անունը Վրթանես էր: Իր ստեղծագործական գործունեությունը սկսել է որպես թատրոնի դերասան: 1870-ական թվականների սկզբներին խաղացել է «Վարդովյան» թատրոնում: Հետագայում ընդունել է հոգևորական կոչում և ստացել Արիստակես անունը: Վարել է մի շարք հոգևորական պաշտոններ, միաժամանակ զբաղվել է բանասիրությամբ: Նրա գրչին պատկանում մի շարք բարոյախրատական և ծեսի հետ կապված մեկնողական աշխատություններ և հոդվածներ: 1880-ական թվականների կեսերին երաժշտագիտական հոդվածներ է տպագրել Պոլսում լրայս տեսնող «Արևելք» օրաթերթում⁹⁵: Սակայն Ա. Հիսարյանը ամենից հայտնի է իր «Պատմութիւն հայ ձայնագրութեան և կենսագրութիւնք երաժիշտ ազգայնց» (1839-1908) աշխատությամբ՝ արժանացած Իզմիրյան մրցանակի, որը մտավ ազգային երաժշտության պատմության մեջ որպես այդ բնույթի առաջին և կարևոր երկասիրություն:

Գիրքն առ այսօր արժեքավոր է նախևառաջ XVIII դարի կեսերին ծնված սերնդի պոլսահայ երաժիշտների

⁹⁵Տե՛ս Ստեփանյան Գ. Կենսագրական բառարան (Հայ մշակույթի գործիչներ, երեք հատորով). Հ. Բ., Եր., Սովորության գրող, 1981 էջ 184:

կենսագրություններով՝ Գրիգոր Գապասաքալյան (1740-1808), Զեննէ Պողոս Վարժապետյան (1746-1826), Համբարձում Լիմոնջյան (1768-1839), Յովհաննես Սարկավագ (1755-1845), Տիրացու Եղիսէ (1770-1833) և ուրիշներ, որոնց կյանքի և գործունեության վերաբերյալ կցկտուր տեղեկություններ են պահպանվել: Ընդ որում, անդրադառնալով վերոնշյալ երաժիշտ տիրացուներին, Հիսարյանը խատորեն հետևել է ժամանակագրական կարգին:



Արիստակես քահանա Հիսարյան

Այդ գրքից ենք առաջին անգամ տեղեկություն ստանում կեսարացի Գրիգոր Դպիր Գապասաքալյանի կյանքի և գործունեության մասին: Թեև Հիսարյանի վերաբերմունքը

Գապասաքայանի հանդեպ խիստ քննադատական է, ինչը, հավանաբար, պետք է դիտարկել որպես իր ժամանակի բնորոշ գիծ, այնուամենայնիվ, նրա շարադրանքը կարևոր տեղեկություններ է պարունակում XVIII-XIX դարի սկզբի համար այդ անտովոր անձի շուրջ, ով իրեն ամբողջությամբ երաժշտական գիտությանը նվիրած առաջին մարդն էր հայ իրականության մեջ և իր երկասիրությունները տպագրում էր սեփական միջոցներով: Հիսարյանի անդրադարձը Գապասաքայանի ժառանգությանը և, մասնավորաբար, նրա խազագիտական պրատումներին և առաջարկած նոտագրությանը բավական ծավալուն շարադրանք են ընդգրկում:



*Ա. Հիսարյանի «Պատմութիւն հայ ձայնագրութեան»
գրքի սիմողուսաթերթը*

Հայտնի է, որ Գր. Գապասաքայյանի երաժշտագիտական ժառանգության գնահատականը միշտ չէ, որ եղել է միանշանակ և համարժեք: Նրա ժառանգության ոչ արդարցի, ոչ օրյեկտիվ գնահատականը, մեր կարծիքով, մեծ մասամբ պայմանավորված է եղել աստվածաբանական տարրի զգալի ներկայությամբ, ինչն ընկալվել է որպես հետադիմական, հավանաբար, XVIII դ. Եկրոպական գեղագիտության և երաժշտագիտության միտումների համեմատությամբ իր դարն ապրած չոր սխոլաստիկայի դրսեորում: Այլ պատճառներից կարելի է նշել նրա լեզուն, երբեմն բավական խճողված, վերամբարձ և պաճուճազարդ գրաբարը, որը ևս ընկալման և թարգմանության համար դժվարություններ էր (և է) հարուցում: Ահա ինչպես է արտահայտվել Հիսարյանը այդ կապակցությամբ. «Ահաւասիկ այս տեսակ բացատրութիւններէ կը բաղկանան Գապասաքալեանի բոլոր գործերը, որոնցմէ լոյս քաղելու համար Դանիկ մարգարէ մը ըլլալ պէտք է, որպէսզի կարենայ մեկնել «Մենէ, Թեկէլ, Փարէս»-ի պէս խորհրդաւոր բառերը»⁹⁶: Բացասական վերաբերմունքի է արժանացնում Հիսարյանը նաև նրա այսպես կոչված հունասիրությունը, որը միշտ չէ որ բոլորին է գոհացրել. «Պետք չէ զարմանալ թէ մեր եկեղեցեաց մէջ ի հնումն մուտ գործած էր Յունական եղանակը, վասնզի Հայ ձայնագրութեան հրաշալի գիւտէն առաջ մեր բոլոր հին դպրապետները Յունական ոնզային եղանակի ազդեցութեան տակ գտնուելով՝ ըստ այնմ կ'երգէին Ս.Պատարագի արարողութեանց մեծագոյն մասը, մանաւանդ Տաղերն ու Մեղեղիները, որոնք անախործ ազդեցութիւն մը կ'ընէին ունկնդրին վրայ, - գրում է Հիսարյանը, ավելացնելով, - Կ'երեւի թէ սոյն տպատրութեան ներքեւ կը

⁹⁶Տե՛ս Հիսարյան, Պատմութիւն հայ ձայնագրութեան..., էջ 25:

գտնուիր նաև Գրիգոր դպիր Գապասաքալեան՝ իր երկու հեղինակութիւններն (Նուազարան և Գիրք Երաժշտական) երկասիրած միջոցին»⁹⁷: Այդուհանդերձ Հիսարյանը բավական մեծ մեջբերումներ է կատարել Գապասաքալեանի «Գիրք Երաժշտական»-ից, ընթերցողի ուշադրությունը հրավիրելով միջնադարյան մի շարք մեկնություններից քաղված պատումների վրա, որոնց իր աշխատության էջերում տեղ էր հատկացրել Գրիգոր դպիրը, օրինակ. «Ասէ Դավիթ Անյալըն փիլիսոփայից, ի կիր արկանելով գերաժշտականն զարհեստ. թէ գտողն արհեստիս է Որիկեռս ոմն՝ նախնի իմաստասերն Յունաց, որ ի Թրակիոյ: Վասն սորա պատմի թէ էր քանաստեղծ և յոյժ հոչակատը նուազածու, որ ի նուազելն իւրում շարժէր զանտառս և զվեմս, և կառկառեալ կապէր զընթացս գետոյ. և ընդարմացուցեալ նուաճէր զգազանս ամեհիս: Նաեւ ասէ փիլիսոփայն թէ Յոյնք՝ յառաջնմէ խուժադրուժք և վայրենիք, կոչեցան ի միաբանութիւն ի ձեռն այսր Որիկեռսի: Ուրեմն գովելի՛ է արհեստս, որպէս ասէ Ներգինացի»⁹⁸: Այս հինավորց առասպելախառն պատումը, իրոք, առկա է Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» նշանավոր երկասիրության մեջ, որպէս երաժշտության ներգործական հզոր ուժի, այլ կերպ ասած, հին հունական երաժշտական գեղագիտության մեջ ձևավորված երաժշտական էթոսի տեսության օրինակ: Սրանից անմիջապէս հետո Հիսարյանը Գապասաքալեանից մեջբերել է մեկ այլ՝ հայտնի մեկնություն, որը ոչ այլ ինչն է քան «Յադագս ձայնից» գրվածքի վերապատումը. «Ստեփաննոս փիլիսոփայն գոլով հոչակափայլ երաժիշտ և հմուտ ձայնիցն զիանուրս ձայնս գոյից՝ բաժանեած ի մասունս այս ինչ, որը

⁹⁷ Նոյն տեղում, էջ 10:

⁹⁸ Նոյն տեղում, էջ 27:

են. բառաշել, կառաջել, խրիսնչել, քչել, գոչել...» և այն: Այսինքն, որքան կ քննադատական էր Հիսարյանի մոտեցումը Գապասաքայանի մտածողության և լեզվի խրթին ոճի նկատմամբ, այնուամենայնիվ, արված մեջբերումները հավաստում են, որ նա գնահատել է այդ հատվածները, առանձնացնելով դրանք և արժանացնելով ուշադրության:

Սիանշանակ դրական և առաջադիմական է գնահատել Հիսարյանը հայկական նոր նոտագրության հեղինակ՝ Համբարձում Լիմոնջանի գործունեությունը: Լիմոնջանի ոչգծային նոտագրությունը նա անվանում է «հրաշալի գիւտ» և այդ ոգով էլ շարադրում է ձայնագետին նվիրված ողջ բաժինը: Անգամ Համբարձումի հռոմեադավան լինելը (այսինքն, ուղղափառ հայ) կամ նրա ուսումնառությունը հույն Օնոֆրիոս Պապատիի և դերվիշ Դեղէ Խսմահիլ մոտ Հիսարյանի կողմից ընկալվում է որպես դրվատելի երեւույթ, ինչը խորքի մեջ, իրոք, միանգամայն բնական երևույթ էր Կ. Պոլսի յուրահատուկ բազմազգ ու բազմակրոն մշակութային մթնոլորտի պայմաններում:

Արժեստրելով Հ. Լիմոնջանի ոչգծային նոտագրության գյուտը, Հիսարյանը գրել է. «Պապա Համբարձում Լիմոնձեան՝ Հայկական խազերը հնարելով ո՛չ թէ միայն վերանորոգիչը, այլ հիմնադիրն եղաւ Հայ ձայնագրութեան, վասն զի՝ գոնէ ըստ իմ կարծեաց, հաւանական չ'ի թուիր թէ Շարականի խազերով <...> կարելի եղած ըլլայ ամբողջ Ստեղի մը կարդալ, նո՞յն իսկ այդ անհետացած արուեստին տեղեակ եղողներու համար»⁹⁹:

Հետաքրքրական է Հիսարյանի նկարագրած XVIII—XIX դդ. պոլսահայ ամիրաների դերակատարությունը մայրաքաղաքի մշակութային և երաժշտական կյանքում՝ որ-

⁹⁹ Նոյն տեղում, էջ 11:

պես երաժիշտներին հովանավորող հասարակության վերնախավի ազգեցիկ և ունետ ներկայացուցիչների. «Այն միջոցներուն (1800) մեծ համբաւ կը վայելէր Տիրզեանց գերդաստանը, որոնք բնակութիւն հաստատած էին ի Գուրուչէշմէ: Նոցա ծովեզերեաց ապարանքը ժամանակին բոլոր երեւելի անձնատրութիւնները՝ որոնք հմուտ էին Արեւելեան եղանակներուն, իոն կը յաճախէին ստեպ՝ զիտնալով այդ գերդաստանին Արեւելեան երաժշտութեան ջերմ սիրահար ըլլալը, նամանաւանդ Յովհաննես (1749-1812), Անտոն (1765-1814) և Յակոբ (1793-1847) չեղախները, որոնք արուեստին քաջահմուտ էին և հետեւող»¹⁰⁰: Այսինքն, Հիսարյանի շարադրանքից պարզ է դառնում, որ տակավին XVIII դ. Վերջին - XIX դ. սկզբներին Դյուզյանների շքեղ առանձնատանը, որը գտնվում էր Բոսֆորի եվրոպական ափին, Պոլսում գործում էր երաժշտական մի սալոն, ուր պարբերաբար իրար էին հանդիպում արեւելյան երաժշտության սիրահարներն ու զիտակները և «ուր կը վիճաբանուիին և կը լուսաբանուիին Արեւելեան հեշտ և ճոխ եղանակներու այլազան ելեւէջներու մասին»¹⁰¹:

Հիսարյանի ուշագրավ վկայություններից է Համբարձում Բաբա Լիմոնջյանի հակառակորդներից տիրացու Եղիսէի դրսնորած կոշտ վերաբերմունքի մասին հաղորդած տեղեկությունը: Պարզվում է, որ Լիմոնջյանը ունեցել է նաև նախանձու թշնամիներ, որոնց պահվածքն անգամ կողմնակի, մասնավորապես, ամիրա Հարություն Պեղջյանի միջամտության կարիքն է ունեցել: Հակառակորդներից էր նաև գարբաղցի Հարություն Վարժապետը (1779-1859), ով ընկերակից էր Լիմոնջյանին, աշակերտելով Զեննէ Պողոսին:

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 10:

¹⁰¹ Նույն տեղում, էջ 9:

Հետագայում նա երկար տարիներ դասախոսել է Շարականի վերաբերյալ և «այնչափ լավատեղեակ էր անոր, որ գրեթե մեծաւ մասամբ գոց կ'երգէր բոլո՞ր Օրհնութիւններն, Հարցերը, Մեծացուացէներն ու Ստեղի Մանկունքները»¹⁰²: Սակայն նա նույնպես չէր կարողանում հաշտվել ամիրա Պեզճյանի՝ Բարս Համբարձումին ցուցաբերած ջերմ համակրանքի և հովանավորության հետ: Այդուհանդերձ Հիսարյանը նշում է, որ Հարություն վարժապետը, ում մասնավոր արհեստը ոսկերչությունն էր, ինգ բնավորություն ուներ: Ամիրա Պեզճյանի հորդրով ստիպված թռղել է իր արհեստը՝ Եկեղեցական երգեցողություն դասավանդելու համար: Պեզճյանը, «որ իր դարուն համայն դպրաց դասերու սատարն եղած էր թե՛ նիւթապէս և թե՛ բարոյապէս», իր կենդանության օրոք մի կլոր գումար կտակեց, որի տոկոսներով ամսական 500 դրամուշ «պիտի ստանար անխափան Մայր Եկեղեցու դպրապետութեան պաշտօնը վարող երաժիշտը, ո՛վ ոք ալ եղած ըլլար»¹⁰³: Ըստ Հիսարյանի, գարքաղի Հարություն վարժապետը քառասուն տարի բեղմնավոր մանկավարժական գործունեություն է վարել, բազմաթիվ շարականագետ աշակերտներ պատրաստելով, որոնցից հատկապէս նշելի են Տիրացու Անդրանիկը, Աշազուրկ Մելքոնը, Կարճ Հովհաննեսը, Գրիգոր Գամաղիկյանը, Հովսեփ Փեհլիվանյանը և Մկրտիչ Զարպհանալյանը¹⁰⁴:

Հետաքրքրական է, թե ինչպես է գնահատել Ա. Հիսարյանը Պոլսի XIX դարի Եկեղեցական երաժշտական կյանքը. «Ժթ. դարու սկիզբները եկեղեցական դպրութիւնը

¹⁰² Նույն տեղում, էջ 30:

¹⁰³ Նույն տեղում, էջ 31:

¹⁰⁴ Նույն տեղում:

այնքան բարգաւաճեալ վիճակ մը ունեցաւ, որ իրաւամբ կրնանք անուանել Դպրութեան Ռսկեղարը: Այդ պաշտոնը խիստ պատուաբեր բան մը համարուած էր այն ատեն, որով շատ մեծամեծ ազգայիններ շապիկ կը հագնէին, ինչպէս Յարութիւն ամիրա Պէզճեան, Պողոս պէտ Տատեան և ուրիշներ: Ամենէն առաջ արժան կը դատենք յիշել պատմական կարգաւ Զէննէ մականուանեալ Պողոս ամուսնաւոր սարկաւագը (<...>՝ որ պատկառելի ներկայացուցիչն ու նահապետը եղաւ անցեալ դարու դպրաց, իր հասցուցած բազմաթիւ աշակերտներով»¹⁰⁵:

Եթե համեմատելու լինենք այդ գնահատականը նույն ժամանակաշրջանի Պոլսի հայ եկեղեցական երաժշտությանը տված Կոմիտասի գնահատականի հետ, ապա կտեսնենք, որ դրանք ներկայացնում են հակադիր տեսակետներ, թեև Կոմիտասի հայտնի հոդվածը լույս է տեսել է 1897 թվականին¹⁰⁶, իսկ Հիսարյանի գիրքը՝ 1914-ին: Սակայն Կոմիտասի գնահատականին զարմանալիորեն ներդաշնակ է Համբարձում Լիմոնջյանի XVIII դ. Վերջի - XIX դ. առաջին երեք տասնամյակների Պոլսի եկեղեցական երաժշտությանը տրված գնահատականին: Իր ինքնակենսագրության մեջ Լիմոնջյանը գրել է հետևյալը. «Դժբախտաբար Շարականաց այն հոգեզմայլ երգեցողութիւնները խաղալիք դարձած են մինչեւ ցարդ՝ ինել մը հաւակնուտ դպիրներու բերնին մեջ, որոնք կը կարծեն թէ Ներսէս Շնորհալիկ ուղղակի իրենց աւանդուած են այն եղանակերը՝ զորս իրենց քմաց համեմատ կերգեն խիստ անպատշաճ կերպով, առանց

¹⁰⁵ Նոյն տեղում, 20:

¹⁰⁶ Տէ՛ս Կոմիտաս վարդապէտ, Հայ եկեղեցական երժշտութիւնը ԺԹ. դպրում // Ռւսականականիրութիւններ և յօդուածներ երկու գրքով, Գիրք Ա, Ե., Սարգիս Խաչենց, 2005, էջ 48~89:

նկատողութեան առնելու թէ մեր եկեղեցական երաժշտութիւնը իր պարզութեամբ վսեմ է և գեղեցիկ: Ուրեմն ի՞նչ հարկ կայ անոնց մէջ աւելորդ գեղգեղանքներ մտցնել, և իրենց ձայնին գեղեցկութիւնը ցուցադրելու նպատակաւ՝ անվայելուշ ձեւերով նմանողութիւնը ընել այն ինչ Երգիչն, Գնչուին կամ Հրեային: Այս միջոցաւ ժողովուրդը փոխանակ ջերմեռանդութեան հրամիրելու, աւելի եւս մեղապարտ կացուցած չե՞նք ըլլար միթէ»¹⁰⁷: Զայնագետի զուսպ հանդիմանությունը, որն ուղղված է եկեղեցական երգեցողության ոճը թելապրոդների ճաշակին, հստակ արտահայտված մտահոգություն է պարունակում:

Միաժամանակ անհերքելի փաստ է, որ Կոստանդնուպոլսի եվրոպական մասում հազարամյակից ավելի գոյություն ունեցած հոծ հայկական համանքը, Բյուզանդական կայսրության սկզբնավորման դարերից ի վեր¹⁰⁸ Բոսֆորի ափին բնակություն հաստատած հայերը իրենց շրջանի (նաև այլ շրջաններում)՝ Գում Գարուի յուրաքանչյուր թաղամասում եկեղեցի ունեին իր քահանայով, սարկավագներով և դպրաց դասերով¹⁰⁹: Ուստի՝ այսպես թե այնպես, հայոց պատրիարքարանը, որը հիմնադրվել էր տակավին 1461 թ., պարտավոր էր մշտապես իր ուշադրության կենտրոնում պահել երգ-երաժշտության դասավանդման և դպրաց դասերի երգեցողության մակարդակը, հայ եկեղեցու

¹⁰⁷ Նույն տեղում, էջ 57:

¹⁰⁸ Հայոց համայնքը Կոստանդնուպոլսում կազմավորվել է դեռևս 572 թվականին:

¹⁰⁹ Թեև Սուսամբուլի ներկայիս հայկական համայնքը, որը հիմնականում կազմված է հին պղսեցիների ժառանգներից ու նրանց սերունդներից, հարյուրապատիկ անգամներ փոքր է մինչև 1915 թ. գոյություն ունեցող պղսահայ համայնքից, այնուամենայնիվ եիմա էլ Սոսամբուլում 40 գործող հայկական եկեղեցիներ կան:

պաշտոներգությունը պատշաճ բարձրության վրա պահելու համար:

Սակայն Հիսարյանին հետաքրքրել են ոչ միայն եկեղեցական երաժշտության հարցերը: Իր մենագրության մեջ նա լուսաբանել է նաև հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի ձևավորման գործընթացը, անդրադառնալով, Տիգրան Չուխաջյանի, Քրիստափոր Կարա-Մուրզայի, Մակար Եկմայլյանի ստեղծագործական գործունեությանը, հասցնելով իր շարադրանքը մինչև Կոմիտաս Վարդապետի անձը:

Այսպիսով, Արիստակես Հիսարյանի աշխատությունը, որը նվիրված էր նոր հայկական ձայնագրության զյուտին և XIX դ. երաժշտական մշակույթի երախտավորներին, իրավամբ առաջին ընդհանուրացնող մենագրության փորձն էր հայ իրականության մեջ:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՊՈԼՍԱՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԱԺԵՏՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԿՈՍԻՏԱՄԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Կոմիտաս վարդապետի «Հայոց եկեղեցական երաժշտութիւնը ԺԹ. դարում» (Ա. շրջան 1839-1874) հոդվածը առանձանիատուկ տեղ է գրադեցնում նրա գիտական ժառանգության մեջ¹¹⁰: Հոդվածում Կոմիտասը պոլսահայ երաժշտական կյանքին և երաժիշտ-ձայնագետներին վերաբերող արժեքավոր տեղեկություններ և գնահատականներ է տվել, անվանելով եկեղեցու երաժիշտ սպասավորներին, եկեղեցական երգեցողությամբ գրադվորներին «տիրացու»: Ամենայն հավանականությամբ, նա ի մոտո ուսումնասիրել էր Կոստանդնուպոլսի երաժշտական եկեղեցական կյանքը: Այդ է պատճառը, որ տվյալ հոդվածը ընթերցողին է հաղորդում կարծես ականատեսի անմիջական տպավորությունները, XIX դարի կենդանի շունչն ու մթնոլորտը: Կոմիտասը կենտրոնացել է Համբարձում Լիմոնջյանի մահվան տարեթվից (1839) մինչև Եղիա Տնտեսյանի «Նկարագիր երգոց»-ի հրատարակման թվականը:

Հոդվածը զրվել է Կոմիտասի Գերմանիայում ուսանելու տարիներին: Այդ շրջանում երիտասարդ գիտնականը ուսումնասիրել և սերտել է ոչ միայն եվրոպացի առաջատար միջնադարագետների հետազոտությունները (Շրոդեր, Պետերման, Գաստուկ, Ֆլայշեր, Բելերման և ուրիշներ), այլ նաև հայ երաժիշտ-տեսաբանների՝ Գր. Գապասա-

¹¹⁰ Առաջին անգամ տպագրվել է «Արարատ» հանդեսում, 1897, թիւ 5, էջ 221—225:

քայլանի և Ե. Տնտեսյանի աշխատությունները։ Ակնհայտ է Կոմիտասի և պոլասահայ տեսաբանների միջև ժառանգական կապը՝ գիտական հետաքրքրությունների և երաժշտատեսական հիմնախնդիրների հետազոտման առումով։



Կոմիտաս վարդապետ

Նշելի է, որ Կոմիտասի քննվող հոդվածը փաստորեն հերթական փորձն էր գնահատելու, իսկ գուցեն վերագնա-

հասուելու Պոլսի հայկական եկեղեցական երաժշտությունը և այդ ոլորտում գործած հայ երաժիշտներին: Նկատի ունենք Հիսարյանի աշխատությունը, ինչպես նաև դրան նախորդած հայ ձայնագետներին նվիրված կենսագրական մյուս աշխատությունները, որոնցից մեծապես օգտվել է վերջինս՝ իր գիրքը աշխատասիրելիս:

Տվյալ հոդվածում Կոմիտասն այսպես է գնահատել, օրինակ, Համբարձում Լիմոնջյանի գործունեությունը. «Դարուս Հայոց եկեղեցական երաժշտութեան մէջ Համբարձումը յայտնի է իբրեւ մի տաղանդաւոր Տիրացու: (...) Նա յաջող ձայն և երաժշտական մեծ ընդունակութիւն ուներ. նուազում էր Թամբուր. քաջ տեղեակ էր արեւելեան բազմաժիւղ եղանակներին և բազմաստեղծ ամանակներին, որ ուսել էր թիւրք դիրիշ երաժիշտներից. հմուտ էր Յունաց եկեղեցական խազերին և երաժշտութեան: (...) Երկար փորձառութիւնը նորա մտքում յղացնում է այն միտքը, թէ անհրաժեշտ է ձայնանիշ ունենալ շարականի երգեցողութիւնը դիւրացնելու և հոգևոր երգերն անկորուստ պահպանելու համար: Շատ չի անցնում, միտքն իրագործում է. հնարում է արդի ձայնանիշներն ու ամանակները 1839-ին, մահից մի քանի ամիս առաջ, իսկ թերին լրացնում են աշակերտները, եվրոպական երաժշտութեան հետեւղութեամբ, մասամբ նորա կենդանութեան ժամանակ, մասամբ մահից յետոյ»¹¹¹: Այսուեղ ուշադրություն է գրավում այն փաստը, որ Կոմիտասը որպես հայ նոր նոտագրության գյուտի տարերիվ է նշում 1839 թվականը (այսինքն՝ Լիմոնջյանի մահվան տարերիվը), ինչը չի համաձայնեցվում ներկայումս երաժշտագիտության մեջ ընդունված 1813-1815 թվականներին: Մեր

¹¹¹ Տե՛ս Կոմիտաս վարդապետ, Ուսումնասիրութիւններ և յօդուածներ երկու գրքով, գիրք Ա, Եր., 2005, նշվ. հոդվածը, էջ 78-79:

կարծիքով, այստեղ մեկտեղվել է համբարձումյան ձայնանիշերի ստեղծման (1813-1815 թթ.) և Շարականի երգերի ձայնագրման առաջին փորձերի տարեթվերը (1839): Իրոք, Շարականի երգասացությունները, բայց բոլոր մատենագրական տվյալների, Լիմոնջյանը սկսեց ձայնագրել մահվանից մի քանի ամիս առաջ: Իր մահվանից հետո գործը շարունակել է Արխտակես Հովհաննիսյանը, ինչպես և ինքը Կոմիտասն է հաստատում իր հոդվածում:

Առհասարակ վերոնշյալ հոդվածում կան որոշ մանրամասներ, որոնք այսօր այլ կերպ են ընկալվում, օրինակ. «...Բարա Համբարձումը ձայնանիշների և ամանակների ձևն առնում է հայկական հին խազերից, բայց արարական անուններ է դնում. որովհետև իւր փորձերն եւ կատարում եր տաճիկ-արարական նուագարանի՝ Թամբուրի վերայ, ուր ամէն լար իւր յատուկ արաբերէն անունն ունի: Հայկական անուանադրութիւնը արդէն աւելի ուշ ժամանակի և նորա աշակերտների գործն է»¹¹²: Անգամ Լիմոնջյանի պահպանված ձեռագրերում իր ձայնագրած շարականների ձայնեղանակները նշել է համապատասխանեցնելով այս կամ այն մակամի հնչունակարգի անվանումներին:

Կոմիտասը փուլ առ փուլ նկարագրել և վերլուծել է համբարձումյան նոտագրության զարգացումն ու կատարելագործումը: Այսպես, այդ ձանապարհին Լիմոնջյանի աշակերտների մասնակցության կապակցությամբ, նա գրել է հետևյալը. «Սոքա շուտով նկատեցին ձայնանիշների բազմավանկ անունների անյարմարութիւնը, ուստի կրճատելով թողին միայն առաջին վանելը: Անունների կրճատումը առաջ բերաւ նոր փոփոխութիւններ. ոմանք Եվրոպական անուններն սկսեցին գործածել. Եղիա Տնտեսեանը (†1881)

¹¹² Նույն տեղում, էջ 80:

թե-ի տեղ բա, լա-ի տեղ լի և այլն փոխելն էր առաջարկում, իսկ ումանք փորձեցին ձայնաւոր տառերով կոչել: (Այսպիսի խառնաշփորչութեան ժամանակ Տաճիկներն էլ Օսմանլը նոթասը՝ Օսմանեան ձայնանիշ հրատարակեցին, առանց մտադրութեան, թէ աջից ձախ գրուղ խոտոկոսոր գրերին ձախից աջ շարուած ձայնանիշները յարմարել չեն կարող)»¹¹³:

Հատկապես ուշագրավ է Կոմիտասի հաղորդած տեղեկությունն այն մասին, թէ՝ «Ամանակների կամ տեսդական նշանների թերին լրացնում են Բարա Համբարձումի աշակերտներից Արիստակէս Յովհաննիսյանը՝ (†1878) այսինքն 4/4, 3/32, 3/64 ամանակները: Թէ ո՞վ է յարմարեցրել ամանակների հայկական անուանադրութիւնը, չգիտենք: Համբարձում Բարան տաճիկ-արաբական դիմ, թէք, թէրէ, թէիկը, ժէսրէ եւ այլն անուններովն էր սովորեցնում, այն զանազանութեամբ, որ նոցա երաժշտական տաղաչափութեան մէջ աջ և ձախ ձեռքերի վեր ու վայր ծնկատրոփ շարժողութեամբ է բաղխումները միմեանցից որոշաւմ, իսկ նա ոտքի, ձեռքի և մատների վեր ու վայր բաղխման վերածեց, որն և անուանում էր դիմքէք. ամանակների և հայկական անուանադրութիւնը, թուերի վերածելը՝ ըստ Երոպականի նորա աշակերտներիցն է մնացել»¹¹⁴:

Կոմիտասի մեկնաբանմամբ՝ «Բարա Համբարձումի տեսդական նշաններն այն յարմարութիւնն ու առաւելութիւնն ունեին արեւելեան երաժշտական տաղաչափութեան նկատմամբ որ տաճկական կնճռոտ ուսուլների ամանակների գործադրութեան ըմբռումը միանգամայն եեշտացաւ.

¹¹³ Նույն տեղում:

¹¹⁴ Նույն տեղում:

բոլոր ուսուլները նա վերածեց մի բաղլաման։ Այս դրութեամբ աւելորդ եղան տաճիկ-արաբական բազմանուն, խառնաշփոթ, անզործնական և անհեթեթ Սէմահ, Ազր Սէմահ, Դէվրիբէվան, Զէնջիր, Աբսաֆ, Աբսաֆ Քէրիր, Զարրիֆէր, Թահրէ, Դիւյէ, Մուհամմէդ, Զէմբէր, Դէվրիր, Բէրէ վեան, Իւրիւֆ Սէմահ, Էվսար, Հաֆիֆ, Սաֆիլ, Զիֆրէ, Դիւմէ, Նիմ Սաֆիլ, Նիմ Դէվիր, Շէմէլ, Էֆէր, Հէջէգ, Ֆրէնզիֆէր, Սոփիան, և այլն, և այլն, կոչուած հազար ու մի անպէտք չափերի անուններով աշակերտների գլուխներն ուղղնելը»¹¹⁵:

Հայկական նոր նոտագրության այլ մանրամասների, օրինակ, դինամիկ նշանների մասին, Կոմիտասը գրել է. «Զայների գորութեան արտահայտիչ նշաններն աւելացրին Բարա Համբարձումի աշակերտները՝ գլխաւորապէս Արիստակէս Յովիաննիսեանը և սորա աշակերտ տիրացու Գարդիկ Երանեանը (†1860): Տիրացու Գարդիկը եվրոպական ձայնագրութեան տարերքին առաւել ծանոթ էր, քան ժամանակակից տիրացու երաժիշտները, սա՛ էր ազգային երգերի տարածման մեծապէս նպաստողը, ուստի ժողովուրդը նորան Նորացի հոչակեց»¹¹⁶:

Սակայն նոր հայկական նոտագրության ներմուծման գործընթացը հարթ ու հանգիստ չէր անցնում: Այդ կապակցությամբ Կոմիտասը, քաջատեղյակ լինելով անցուդարձին, հայտնում է հետևյալը.

«Տիրացու Համբարձումն ու աշակերտներ հայկական ձայնագրութիւնն արդէն գրել կարդապու չափ մշակել էին, երբ նորա աշակերտները զանազան ուղղութիւնների սկսե-

¹¹⁵ Նոյն տեղում, էջ 80-81:

¹¹⁶ Նոյն տեղում, էջ 81:

ցին հետեւել եւ եկեղեցական երաժշտութիւնը փոխանակ մշակելու և պարզելու, խառնեցին ու պղտորեցին: Տիրացու Համբարձումի անդրանիկ աշակերտներից Պետրոս Զեօմիքչեանն ու սորա աշակերտները սկսեցին մեծ ջանք թափել տաճկական մեղկ եղանակներ մեր եկեղեցական երաժշտութեան մէջ մուծելու համար: Դժբաղդաբար, - շարունակում է վարդապետը, - զրեթէ բոլոր ձայնագէտները նորա շեղ և խորթ ուղին էին բոնել: Ումանք, դեռ եկրոպական ձայնագրութեան հիմնական տարերքը չըմբռնած, արեւելեան երաժշտական ոգի ուզեցին ներշնչել հոգևոր երգերին: Մի քանիսն էլ առաջարկում էին յունաց եկեղեցական երաժշտութեամբ հայկականը սրբագրել»¹¹⁷:

Հասկանալի է Կոմիտասի մտահոգությունը և անզամ վրդովմունքը այդ տարիներին ստեղված իրավիճակի կապակցությամբ: Նա գրում է.

«Մինչդեռ Հայոց եկեղեցական երաժշտութիւնը մի շարք երաժիշտ և իմաստակ տիրացուների ճաշակի կամ կրքի խաղալիք էր դարձել, Վ. Պոլսից Հայոց Պատրիարքարանը ազգային եղանակները մոտալուտ կորստից ազատելու համար գործի գլուխ անցավ: Այս բարի ձգտումն իրագործելու և գործին ուղիղ ընթացք տալու համար, հարկ համարուեցաւ, որ Վ. Պոլսի բազմակարծիք և ինքնահաւան տիրացուներից մի յանձնաժողով գումարուի»¹¹⁸:

Հաջորդ ենթաբաժինը Կոմիտասը նվիրել է Պատրիարքարանի նախաձեռնած երաժշտական ժողովների պատմությանը: Առաջին ժողովը պետք է տեղի ունենար 1864 թ. հոկտեմբերի 2-ին, Ղալաթիոյ Հայոց եկեղեցու սենյակներից մեկում, սակայն քաղաքի բազմաթիվ տիրացու-

¹¹⁷ Նույն տեղում, էջ 83:

¹¹⁸ Նույն տեղում:

ներից ներկայացան միայն Արիստակէս Յովհաննիսյանը և Եղիա Տնտեսյանը, «որոնք աաւանդապահ և ականատր երաժիշտ տիրացուներ էին»¹¹⁹: Բնականաբար, ժողովը տեղի չի ունենում:

Երկրորդ ժողովը հրավիրվել է 1864-ի՝ դեկտեմբերի 8-ին Ազգային կրօնական ժողովում. «Այս անգամ, արդէն մեծամասնութիւնը բարեհաճում է գալ»: «Որոշում է ընդունվում, որ մի հանձնաժողով կազմվի տիրացու երաժիշտներից, որը պետք է զբաղվեր եկեղեցական եղանակները բարեկազմելու գործով: Քվեարկութեամբ ընտրում են մասնաժողովի համար անդամներ. բայց առաջին խսնիստից յետոյ ժողովը խափանում է եւ անդամները ցրում են անմիջապէս»¹²⁰:

«Այս անյաջողութիւնը աւելի ևս խրախուսեց տիրացուների կամայականութիւնն ու երեակայութիւնը», - գրում է Կոմիտասը, - «Անհաջողութեան հետեւանքը մի նոր հոսանք յառաջ բերեց - անհատական ճաշակի երաժշտութեան հոսանք: Խուժուժական բազմաթիւ մեղեղիներ, տաղեր, Տէր-ողորմեաներ, Ամէն եւ ընդ հոգույս քումներ, Քրիստոս պատարագեալներ, մի խոսքով տաճկական Շարֆի, Թիւրֆի, Մանի, Նանի եղանակներով պատարագի արարողութիւններ, ծաղկագիր տետրակներով, հոգածութեամբ գրուած, իւրաքանչիւր ինքն իրեն երաժշտագէտ համարող տիրացուի կողմից աշակերտներին և երգեցիկ մանուկներին իբր անզին գանձ, աւանդ տրուեցաւ, որոնց նմուշներն այսօր էլ երգում են Տաճկահայաստանի բոլոր վայ-

¹¹⁹ Նույն տեղում, էջ 84:

¹²⁰ Նույն տեղում:

բերում մայրաքաղաքիցն սկսած մինչև վերջին գյուղական եկեղեցիները»¹²¹:

Նկատելի է Կոմիտասի որոշակի դառը չարախնդութիւնը, սակայն դրա հետևում զգացվում է խորը մտահոգությունը և ափսոսանքը՝ տիրացուների նմանատիպ ճշճիմ պահվածքի կապակցությամբ: «Մենք անձամբ ճանաչում ենք այդ ողորմելի շրջանի ներկայացուցիչներից շատերին, - շարունակում է երաժշտագետը, - Սրանցից մեկը Բ... քաղաքի¹²² տիրացուն, գերապատիւ առաջնորդի բաղձանքով, մի նոր պատարագի արարողութիւն էր գրել, որը եւ մեզ ցոյց տուեց պարծանքով՝ իւր սին հանձարով ոգետրված: Այս խղճուկ պատարագի երգեցողութիւնից ահա մի քանի նմուշ յառաջ ենք բերում»¹²³, ինչին հետևում է Համբարձումյան նոտագրությամբ՝ ձայնագրած երեք մեջբերում: «Ահա այս շրջանի եկեղեցական երաժշտութիւնը աչքի է ընկնում իւր անձաշակ, երեւ չասենք անհամեստ, գոնէ խառնիխուուն, երաժշտական աւիւնից խապարզութեան աշքի և բառերի ներքին իմաստի կատարեալ անհամաձայնութեան մասին. մինչդեռ խոսքերը մարդկութեան Փրկչի և Մեծ Վարդապետի կենաց ամենանուիրական բռպելներից մեկն են պատկերացնում և հաւատացեալին փրկութեան հաղորդակից լինելու յորդոր կարդում, եղանակի վերնագիրն (Զարգահ) արդէն պղտորում է մարդու միտքն ու սիրտը, այն պատկերացմամբ՝ թէ դա արեւելեան

¹²¹ Նույն տեղում:

¹²² Ամենայն հավանականությամբ, Կոմիտասը նկատի է ունեցել Բուրսան, որն իր մոր ծննդավայրն էր և որտեղ ինքը մոտ մեկ տարի ուսանել էր տեղի դպրոցում:

¹²³ Նույն տեղում էջ 85—87:

այն քազմաձիւղ Եղանակներից մէկն է, որ սրճանցներում, հասարակական կեր ու խումբի վայրերում է միայն երգուու եւ ընդունակ ոգևորելու միայն գուսան-աշուղներին և նոցա առաջ պարողներին»¹²⁴:

Կոմիտաս վարդապետի բնորշմամբ՝ «սանձարձակ տիրացուների շրջանը տեւեց 1864-1873-ը, երբ ազգային եկեղեցական երաժշտութեան համար մի նոր շրջան է սկսում»¹²⁵:

«Իննամեայ ժամանակաշրջանում, - գրում է նա, - աւանդապահ տիրացուներն էլ ձեռք զարկեցին իրանց հաւանած հոգեւոր Եղանակները ձայնագրելու, որ գոնէ եղածն ազատեն անկոչ տիրացուների ձանկերից: Այստեղ ուետք է յիշենք, որ խակ տիրացուներին թեւ ու թիկունք տուին տեղական առանորդներից մի քանիսը, մանաւանդ Կ. Պօլսոյ պայծառափայլ ամիրաները, որոնցից ամէն մէկը մի մի տիրացուի հովանաւորում, կերակրում էր, ուստի եկեղեցական Եղանակները մէկին հազար պտուղ տուին»¹²⁶:

Հոդվածը եզրափակվում է առավել լավատեսական տրամադրությամբ՝ Ենթաքածնով, որտեղ Կոմիտասն անդրադառնում է Համբարձում Լիմոնջյանի և Եղիա Տնտեսյանի գործունեությանը.

«Շարականը ձայնագրելու առաջին փորձն արաւ երաժիշտ տիրացու Բաբա Համբարձումը իւր նոր հնարած ձայնանիշներով 1839 թուին. ձայնագրեց մինչեւ ս. Զատկի օրինութիւնը «Այսոր յարեաւ»-ը, բայց վերահաս մահը գործն ընդհատեց. կարձ ժամանակից յետոյ ձայնագրածներն էլ անյայտացան: Երկրորդ փորձն արել է երաժիշտ

¹²⁴ Նույն տեղում, էջ 87—88:

¹²⁵ Նույն տեղում, էջ 88:

¹²⁶ Նույն տեղում:

Եղիա Տնտեսեանը և աւարտել 1870-ին։ Երրորդ ձայնագրողն է Համբարձում Չերշեանը, որ ցարդ Արմաջու դպրեվանքում դաս է տալիս եկեղեցական երգեցողութիւն եւ ձայնագրութիւն։ Արա մասին գրում է Եղիա Տնտեսեանը. «Այս գործին ուրիշներ ալ կարեի է ձեռնարկած ըլլան, բայց ատոնցմէ՝ հանգուցեալ Պաղեան Կարապետ ամիրայի սատարութեամբ ձայնագրուածը միայն ծանոթ է մեզ, որ թէեւ մեծ գործ մ'է, սակայն մէկ երգողի <և> մէկ ձայնագրողի՝ այսինքն երկու <անձի> կարծիք է. եւ չունի այն քննական ուղղութիւնը, որ անհրաժեշտ է այսպիսի ձեռնարկութեան մը համար. միանգամայն՝ ինչպէս կը նշմարուի, ձայնագրողը քիչ շատ յանդուգն փորձեր ըրած է՝ մեր եղանակները տաճկականին վերայ սրբագրելու»։ «Այս կարծիքին համաձայն ենք, - եզրահանգում է Կոմիտասը, - մեր ձեռքումն էլ կան նորա ձայնագրութեան կանոնատեսրից եւկան քաղուածներ, որոնք իրաւոնք են տալիս, ինչպէս կտեսնենք, Տնտեսեանի գրածը հաստատելու։ (Տէ ս այս մասին երկրորդ շրջանի պատմութիւնը)»¹²⁷։ Փակագծերում տված հղումից կարելի է եզրակացնել, որ հոդվածի երկրորդ մասում, որը պետք է նվիրված լիներ պոլսահայ եկեղեցական երաժշտության երկրորդ շրջանի զարգացումներին, Կոմիտասը, ամենայն հավանականությամբ, մտադիր էր ավելի մանրամասն անդրադառնալ Եղիա Տնտեսյանի, Արիստակես Հովհաննիսյանի և Համբարձում Չերշյանի գործունեությանը։ Երաժիշտներ, որոնց գործունեությունը անհամեմատ ավելի բարձր մասնագիտական բնույթ էր կրում։ Սակայն, ինչպէս գիտենք, հոդվածն այդպէս էլ կիսատ է մտում։

Նույն հոդվածում Կոմիտասը հայտնում է, որ տվյալ

¹²⁷ Նույն տեղում, էջ 89:

շրջանը փակվում է մի երրորդ երաժշտական հանձնաժողովով, որը տեղի է ունեցել 1873-ի ապրիլի 22-ին եւ «տևել է երկու տարու չափ՝ մինչեւ 1875-ի վերջերը»¹²⁸:

«Յանձնանժողովի առաջին նիստին ներկայ են լինում ընտրուած 14 անդամներն էլ. երկար վիճաբանութիւնից յետոյ, ոմանք, անձնական կրքերի համար բաւարար սնունդ չգտնելով, հեռանում են անմիջապէս. մնացածները ձայների մեծամասնութեամբ վճռում են քննութեան առնել Եղիա Տնտեսեանի ձայնազրած շարականը և հոգեւոր երգերը իբրեւ առաւել յարմարաւոր գործ, եւ տպազրութեան հոգսը քաշելու միջոցներ որոնել: Մեզ յայտնի չէ, - եզրափակում է վարդապէտը, - թէ արդեօք յանձնանժողովը վերջացրեց իւր պարապմունքներն այս շարականի նկատմամբ, թէ ոչ. կամ թէ ի՞նչ եղաւ եւ որի՞ մոտ մնաց այս գործը. բայց այսքան միայն գիտենք, որ 14 ընտրեալներից չորսն է միայն մինչև վերջ շարունակում անդամակցել»¹²⁹:

Այսքանով ամփոփվում է Կոմիտաս վարդապէտի չափազանց ուշագրավ, պոլսահայ Եկեղեցական երաժիշտ-տիրացուներին նվիրված հոդվածը՝ «Չարունակելի» նշումով, ինչը, ցավոք, այդպէս էլ չիրականացվեց: Սակայն հոդվածում տրված տեղեկություններն ու գնահատականները, Կոմիտասի խորաթափանց ընկալման և վերլուծության ներքո, թույլ են տալիս հստակ պատկերացում կազմելու Կ. Պոլսի XIX դարի Եկեղեցական երաժշտության ասպարեզում առկա խնդիրների և միտումների վերաբերյալ:

¹²⁸ Նույն տեղում:

¹²⁹ Նույն տեղում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Եվ այսպես, հայ մասնագիտացված երաժշտական մշակույթի պատմության մեջ Նորոգության շրջանը, հիրավի, բախտորոշ մի ժամանակահատված էր: Ազգային ինքնագիտակցության զարթոնքը հայկական գաղթօջախների գարգացման պայմաններում դրսորվեց Սերձավոր Արևելքի, Արևմտյան և Արևելյան Եվրոպայի երկրներում, անգամ հեռավոր Հնդկաստանում իրականացված մտավոր բազմակողմանի գործունեության մեջ: Հայտնի է, որ հենց այդ ժամանակաշրջանում հիմնվեցին բազմաթիվ ազգային դպրոցներ, եկեղեցիներ, տարբեր մշակութային միություններ, սկզբնավորվեց ազգային պարբերական մամուլը, իսկ Միփրարյան միաբանների ջանքերով սկսեցին զարգանալ գիտության հատկապես հումանիտար ճյուղերը:

Այդ շրջանում սկզբնավորվեց նաև հայ երաժշտապատմական և երաժշտատեսական միտքը, մի փաստ, որը մինչև վերջ չի գիտակցվել և ըստ արժանվույն չի գնահատվել մեր երաժշտագիտության մեջ: Եթե հայ երաժշտապատմական միտքը կազմավորվեց և զարգացավ Վենետիկում և Ս.Ղազար կղզում նախևառաջ արքահայր Միփրար Սերաստացու ջանքերով, այնուհետև Ղևոնդ Ալիշանի, Գաբրիել Ավետիքյանի, Մինաս Բժեկյանի և այլոց շնորհիվ, ապա երաժշտատեսական միտքը, անկասկած, սկզբ առավ Կոստանդնուպոլսում՝ ձևավորվելով Գրիգոր Գապասարայյանի նպատակառուղղված գիտական գործունեության մեջ, ինչն արտացոլվեց նրա աշխատություններում: Ազգային երաժշտատեսական մտքի այդ գերակայությունը, որը Պոլսի հայ երաժիշտների նշանակալի մասնակցության

միանշանակ հետևանք էր ոչ միայն ազգային, այլ նաև առհասարակ մերձավորարեւյան երաժշտական մշակույթի և կատարողական արվեստի ասպարեզներում, պահպանվեց շուրջ մեկ հարյուրամյակի՝ XVIII դարի երկրորդ կեսի - XIX դարի առաջին կեսի ընթացքում, ընդհուպ մինչև ազգային կոմպոզիտորական դպրոցի ձևավորման սկիզբը, երբ, ի դեմս Գաբրիել Երանյանի և Տիգրան Չուխացյանի, Պոլսում, և Քրիստոափոր Կարա-Մուրզայի, Մակար Եկմալյանի, Կոմիտաս Վարդապետի, Նիկողայոս և Արմեն Տիգրանյանների և Ալեքսանդր Սպենդիարյանի՝ Կովկասում, և Ռուսաստանում սկսեցին զարգանալ հայ մասնագիտացված երաժշտական մշակույթի տարբեր բնագավառները Կոստանդնուպոլիսը իբրև Արևելքի և Արևմուտքի տարբեր մշակույթների հնագույն խաչմերուկ և խառնարան, հնարավորություն էր ընձեռում մշտական շփումների՝ տարբեր ազգերի արվեստագետների միջև, ծնելով ինքնատիպ գեղարվեստական, այդ թվում՝ երաժշտական ինքնատիպ երևույթներ:

